Azg Ազգ

17 ՅՈՒՆՈՒԱՐ 2007 ՇԱԲԱԹ 7 (3659)

«Ճչացողներ» ֆիլմը կցուցադրվի ԱՄՆ Կոնգրեսի շենքում

Ամերիկյան Կոնգրեսի շենքում ցուցադրվելու է «Ճչացողները» (Screamers) փաստավավերագրական ֆիլմը՝ ախտահոտ տեղի ունեցած ցեղասպանությունների, այդ թվում Մեծ եղեռնի մասին, այն գործիչների մասին, ովքեր պայքարում եւ պայքարել են դրանց դեմ: Ֆիլմը մասնավորապես ներկայացնում է System of a down ռոք խմբի գործունեությունը: Ֆիլմի ռեժիսոր Կարլա Կարապետյանն «Ազատություն» ռադիոկայանին տեղեկացրել է, որ ֆիլմի ցուցադրման կարեւորումը կապված է Հայոց ցեղասպանության բանաձեւը կոնգրեսական Ադամ Շիֆի կողմից կրկին շրջանառության մեջ դրվելու փաստի հետ: Ֆիլմը հունվարի 26-ին կցուցադրվի նաեւ ԱՄՆ-ի բոլոր քաղաքների կինոէկրաններին, մարտ-ապրիլին կտարածվի ախտահոտի մյուս երկրներում, ապրիլի 24-ին հավանաբար կցուցադրվի Հայաստանում: Ֆիլմի մասին ավելի մանրամասն կպատմվի «Ազգի» վաղվա համարում:

Ախտաբուկան շարունակում է մնալ անհավասարակշիռ

Արեւելյան-բանվորների կարիք կա, իսկ բուհերի շրջանավարտները գործազուրկներ են

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍԵԱՆ

Ախտանշային ակտիվ միգրացիան, երբ մարդիկ երկար կամ անորոշ ժամանակով, մենակ կամ իրենց ընտանիքներով կտրվում են երկրից, փորձ-ինչ կմեղմանար, եթե Հայաստանում նրանց տանելի ախտավարձով ախտանշի առաջարկվեր, գոնե ընտանիքները պահելու հնարավորության չափ: Առայժմ հայկական ախտաբուկան չի կարողանում բավարարել հարկադրյալ միգրանտների այդ բնական պահանջը, եւ միգրանտների արտահոսքը ոչ նվազում է, ոչ էլ Հայաստան վերադառնալու ցանկություն ունեցողների թիվն է ավելանում:

Ախտանշային միգրանտների 80 տոկոսը տղամարդիկ են: Նրանք, սովորաբար, դրսում 2-3 անգամ պակաս ախտավարձ են ստանում տեղացիներից եւ 2-3 անգամ ավելի շահագործվում:

Հայաստանի աղքատիկ տեսակետով ախտաբուկայում, սակայն, թափուր ախտատեղեր կան, որոնք ըստ հասցեականության



իրացվելու դեպքում զգալի կկրճատեն ե՛ւ հայրենիքից հեռացողների, ե՛ւ գործազուրկների քանակը:

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով, անցած տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ մեր ախտաբուկայում գործազրկության մակարդակը տարեսկզբի 7,7-ի փոխարեն 7,2 տոկոս է դարձել:

Տես էջ 3

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

Դալայ-լամա. «Ներելու կարողությունը չի նշանակում մոռացության տալ անցյալը»



Հակամարտությունների լուծման ամենալավ ձեւը երկխոսությունն է՝ ներելու կարողության հատուկ կարեւորմամբ: Ըստ «Կոմսոմոլսկայա պրավդայի», խոսելով անցյալում հայերի կրած տառապանքների մասին, նման պատասխան է տվել Դալայ-լամա 14-րդն այն հարցին, թե արդյոք մարդկության հետագա զարգացման համար անհրաժեշտ պայման է Օսմանյան Թուրքիայում 1915 թ.-ին իրագործված հայերի ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը: Դալայ-լաման նշել է, որ ներել բնավ չի նշանակում մոռացության տալ այն, ինչ եղել է:

«Հիշեք ձեր տառապանքների մասին, թող ուրիշներն իմանան դրանց մասին, միեւնույն ժամանակ սրտում չարություն մի պահեք», նշել է Դալայ-լամա 14-րդն, ավելացնելով, որ ավելի նպատակահարմար է փորձել նոր իրողություններում մշակել փոխընդունելի որոշում:

Խոսելով Ղարաբաղի մասին, Դալայ-լամա 14-րդը տեղեկացրել է, որ ծանոթ է խնդրին, մանրամասներին տեղյակ չէ, սակայն, ամենայն հավանականությամբ, նմանություն կա ղարաբաղյան եւ տիբեթյան խնդիրների միջեւ: Ազգերի ինքնորոշման իրավունքի առնչությամբ Դալայ-լաման ընդգծել է ազգերի ինքնորոշման մշակութային ժառանգության պահպանման կարեւորությունը: Ըստ Դալայ-լամայի, Հայաստանը հինավուրց մշակույթով երկիր է, եւ հայերն անշուշտ իրավունք ունեն պահպանելու իրենց ազգային մշակույթն ու ինքնությունը:

Ա. Հ.

«Հայոց ցեղասպանության մասին օրինագիծը մղձավանջի է վերածվել ԱՄՆ-ի հրեական լոբբիի համար»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: «Եթե Անկարան որեւէ քայլ չձեռնարկի, ապա Հայոց ցեղասպանության մասին օրինագիծը կընդունվի ԱՄՆ Կոնգրեսի կողմից, չնայած այն արգելափակելու մեր բոլոր ջանքերին», հայտարարել է ԱՄՆ-ի հրեական ականավոր լոբբիստներից մեկը «Թըրքիշ դեյլի նյուզ»-ում:

Նրա խոսքերով, ո՛չ հրեական լոբբին, ո՛չ ԱՄՆ նախագահը չեն կարողանա խոչընդոտել այս օրինագծի ընդունմանը: «Ներկա քաղաքական իրավիճակը ԱՄՆ-ում Թուրքիայի դեմ է շրջվել այն աստիճան, որ ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը հանդես եկավ հայտարարությամբ, որ օրինագիծն ընդունելու շանսերը շատ մեծ են: Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը կամ պետք է քայլեր ձեռնարկի, կամ պետք է պատրաստ լինի դիմագրավելու հետեւանքներին», ասված է թերթում:

Ըստ հոդվածագրի, ստեղծված իրավիճակը փոխելու երեք ուղի գոյություն ունի: «Մի խումբ դիվանագետներ ենթադրել են Թուրքիայի քաղաքականությունը այն պնդումների առումով, որ արդեն ոչինչ հնարավոր չէ փոխել: Հրեական լոբբիի որոշ ներկայացուցիչներ հավատում են, որ դեռ ուշ չէ: Նրանք գտնում են, որ եթե Թուրքիան դիվանագիտական հարաբերություններ հաստատի եւ բացի Հայաստանի հետ սահմանը, իրավիճակը կարող է լավանալ: Նրանք արդեն տվյալ տարբերակը առաջարկել են Թուրքիայի ԱԳՆ-ին: Եւս մեկ խումբ հայտարարում է, քանի որ ախտահի երկրների խորհրդարանների մեծ մասը արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, ԱՄՆ-ն վերջի-վերջո կմիանա դրանց թվին», նշվում է հոդվածում:

Այնուամենայնիվ, ըստ հրեա հոդվածագրի, Հայոց ցեղասպանության մասին օրինագիծը «արդեն մղձավանջի է վերածվել ԱՄՆ-ի հրեական լոբբիի համար»: «Միակ հույսն այն է, որ Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը: Չնայած թվում է, որ Թուրքիայի ԱԳՆ-ն գործում քաղաքականություն է վարում, այն դժվար թե որեւէ արդյունքների հանգեցնի, քանի որ 2007 թ. Թուրքիայում համաժողովրդական ընտրությունների տարի է: Ամեն դեպքում, 2007 թ. հղի է ճգնաժամով, որը կմթագնի թե՛ նախագահական եւ թե՛ համաժողովրդական ընտրությունները: Եւ հրեական լոբբին արդեն վախեցնում է Թուրքիայի ԱԳՆ-ին այդ դեռ չծնված երեխայով», նշվում է հրապարակման մեջ:

Ալիեւը Գերմանիա է գնում

Փետրվարին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը տնտեսական ներկայացուցչական պատվիրակությամբ պաշտոնական այցով կլինի Գերմանիայում: Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ այս մասին հայտարարել է Ադրբեջանում Գերմանիայի դեսպան Պիեռ Ստանկինան: Նշելով Ադրբեջանի հանդեպ Գերմանիայի հետաքրքրվածության մասին, դեսպանը կարծիք է հայտնել, թե Ադրբեջանը Հարավային Կովկասում ամենակայուն երկիրն է:

Ադրբեջան է վերադարձվել Ղարաբաղ անցած զինծառայողը

Հունվարի 16-ին ադրբեջանցի մի զինծառայող Լեռնային Ղարաբաղից հանձնվել է ադրբեջանական իշխանություններին՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հովանավորությամբ: Ինչպես տեղեկացնում է Կարմիր խաչի մամլո հաղորդագրությունը, զինծառայողն Ադրբեջան է վերադարձվել Աղդամի շրջանի ճակատային գծում: Կարմիր խաչի պատվիրակներն այցելել են ադրբեջանցի զինծառայող Նուրիեւ Էլդանիզ Բեյալիօղլուն՝ հավատիանալու, որ վերջինս իր կամքով է վերադառնում Ադրբեջան: Նուրիեւը ղարաբաղյան կողմ էր անցել 2006 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը, Ֆիզուլիի հատվածում:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ընտրողներից շատերը երազում են Շվարցենեգերին տեսնել ԱՄՆ նախագահ

ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգապետ Արնոլդ Շվարցենեգերի թեկնածությունն ԱՄՆ նախագահական ընտրություններում առաջադրելու մասին խոսակցություններն ուղեկցվում են այն ենթադրություններով, թե հնարավոր է փոփոխություն ԱՄՆ սահմանադրության մեջ: Նշենք, որ Միացյալ Նահանգների սահմանադրությունն արգելում է Ավստրիայում ծնված Արնոլդ Շվարցենեգերին իր թեկնածությունն առաջադրել ԱՄՆ նախագահական ընտրություններում: Սակայն, ինչպես տեղեկացնում է «Նյուս ուիք» պարբերականը, արդեն երկրորդ ժամկետում Կալիֆորնիայի նահանգապետ Շվարցենեգերը ծրագրում է ազդեցություն ունենալ 2008 թ. ընտրություններում:

Կալիֆորնիայի նահանգապետը նշել է, որ կցանկանար Կալիֆորնիայում ընտրությունները հունիսից տեղափոխել փետրվար: Շվարցենեգերը հույս է հայտնել, որ նման փոփոխությունն ընտրություններում երկու կուսակցությունների թեկնածուներին կխրախուսի ավելի շատ ժամանակ անցկացնել խոսելով ընտրողների հետ, փոխանակ գումարներ փնտրելու: Առաջ բերելով ընտրությունները, Շվարցենեգերը կարող է Կալիֆորնիայի համար մի շարք բնապահպանական խնդիրների հարցում ավելի մեծ ուշադրություն գրավել:

Հավելենք, որ վերջերս ոտի վիրահատության ենթարկված նահանգապետի վարկանիշը ամերիկացիների շրջանում 67 տոկոս է, այնինչ նախագահ Բուշինը՝ 32 տոկոս:

Ա. Հ.

Տնտեսական ազատությամբ Հայաստանը 32-րդն է

Հայաստանը տնտեսական ազատությամբ, ըստ Heritage Foundation կազմակերպության «2007 թ. տնտեսական ազատության ցուցիչը» հրապարակման, ախտահում գրավում է 32-րդ տեղը, նախորդ տարվա 27-րդ տեղի փոխարեն: Ամենաազատ տնտեսությունն ունի Հոնկոնգը, իսկ 106 երկրներից կազմված ցուցակը եզրափակում է Իրանը: Ի դեպ, Հայաստանի տնտեսությունն ամենաազատն է ԱՊՀ երկրներում: Մեր հարեւան Վրաստանը 35-րդ տեղում է, Ադրբեջանը՝ 107:

ԸՆԹԱՑԻԿ

Եթե քաղաքական իրավիճակը վերափոխվի ֆորսմաժորայինի, ՄԱԿ-ը չի բացառում ընդհանուր բեւեռ ձեւավորելու գաղափարը

Այս տարվա խորհրդարանական ընտրությունների անցկացման քաղաքական պատասխանատվությունը սանձնելու հայտարարություն արած Միավորված ազգային կուսակցության (ՄԱԿ) ղեկավար **Գուրգեն Արսենյանը** երեկ «Փաստարկ» ակումբում հայտարարեց իրենց կուսակցության նախընտրական ակտիվացումների մասին: Հաջորդ շաբաթվանից կուսակցությունը պատրաստվում է հասարակությանը ներկայացնել իրենց գործունեության հաշվետվության մասին թղթակցումներ, որից հետո հասարակության առաջ արդեն հանդես կգա իր նախընտրական ծրագրերով:

Գուրգեն Արսենյանը հիշեցրեց, որ հունվարի 17-ին ուժի մեջ կմտնի լրացումներ եւ փոփոխություններ կրած ընտրական օրենսգիրքը, որն առաջինը կդառնա փորձաքար հենց իր՝ ՄԱԿ-ի համար: Հունվարի 28-ին նախատեսվում է անցկացնել Չարենցավանի քաղաքապետի ընտրությունը, որին ներկայացված է նաեւ ՄԱԿ-ի թեկնածուն: Իրենց թեկնածուին պաշտպանելու քարոզչական աշխատանքներն արդեն սկսված են, եւ ՄԱԿ-ի ղեկավարը կարծում է, որ այս ընտրություններով պարզ կդառնա նոր օրենսգրքի արդյունավետությունը, այսինքն՝ օրենսգիրքն ինչքանով է կենսունակ իր գործառույթներն իրականացնելու գործում: «Չարենցավանի քաղաքապետի ընտրություններում քարոզչական պայքար է ընթանում, կիրառվում են քարոզչական պայքարի բաղադրիչները եւ առ այսօր չկա որեւէ փաստ՝ հռչակելու, որ որեւէ մեկի կողմից հավասարակշռությունը խախտվում է», ասաց նա:

Կուսակցության ղեկավարը հայտնեց, որ իրենց կուսակցությունը խորհրդարանական ընտրությունների է գնալու իր կուսակցական կառույցներով եւ իր ցուցակով. առայժմ միայն համամասնական ցուցակով, բայց չի բացառվում, որ կուսակցության խորհուրդը նաեւ մեծամասնականի թեկնածու առաջադրելու որոշում կայացնի: Թե ինչ արդյունք է ակնկալում ՄԱԿ-ը խորհրդարանական ընտրություններից, ղեկավարը նշեց. «Մենք ուզում ենք բնակչությանը հաճելիորեն զարմացնել»:

«Եթե հանրաքեսության քաղաքական իրավիճակը վերափոխվի ֆորսմաժորային իրավիճակի, չի բացառվում ընդհանուր բեւեռ ձեւավորելու գաղափարը», ասաց ՄԱԿ-ի ղեկավարը՝ միաժամանակ հավելելով, որ նման իրավիճակ կարող է ստեղծվել որոշակի քաղաքական պայքարների հետեւանքով՝ իրականացված ընդդիմության կողմից:

Խորհրդարանական ընտրություններում հաղթելու հարցը Գ. Արսենյանը դիտարկում է նաեւ ժողովրդի հաղթանակի տեսանկյունից՝ նշելով, որ իրենց համար առաջնային ընտրություններում ինչ վիճելի արդյունքներ ունենալն է, քան թե իրենց օգտին մեկ ձայն ավելի ստանալը: Եթե ապագա խորհրդարանում «Հանրաքեսական» կուսակցության խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն ընդդիմությանը պատրաստ էր 30 տեղ տալ, ապա ՄԱԿ-ը ներկայիս իշխանական կուսակցություններին պատրաստ է իրենցից ավելի շատ տեղ տալ: Գ. Արսենյանը չբացառեց նաեւ նորընտիր խորհրդարանում կոալիցիայի մաս կազմելու հնարավորությունը՝ ընդգծելով, որ նման բան հնարավոր է խորհրդարանական ուժերի եւ իրենց միջեւ նպատակների ընդհանրությունների պարագայում: Միեւնույն ժամանակ փաստեց, որ իրենցից ավելի կոշտ ընդդիմություն չի լինի, եթե տեսնեն, որ իշխանությունները իրենց ծրագրերից եւ նպատակներից տարբեր, այլ բան են անում: Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրություններում իրենց ռեսուրսներին, ապա Գ. Արսենյանը կարծում է, որ իրենց հաջողության գրավականը համապետական ծածկույթն է ու որակը: Իսկ գուցե քաղաքական կուսակցության ղեկավարին հույս է ներշնչել նախագահ Քոչարյանի խոսքերը, երբ երեք հեռուստաընկերություններին տված տարեվերջյան հարցազրույցի ժամանակ ապագա խորհրդարանի տեսլականում երկրի ղեկավարը ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի կողքին տեսավ նաեւ ՄԱԿ-ին:

Խորհրդարանական ընտրությունների նորմալ անցկացման համար եւս մեկ անգամ պատասխանատվություն սանձնելով՝ Գուրգեն Արսենյանը նշեց, որ մեր երկրի ուղեծիրն ուղղված է դեպի ազատականության եւ արժեքային համակարգի ամրապնդմանը, ուստի իրենք ոչ մեկին թույլ չեն տա փոխել այդ ուղեծիրը: «Այս 15 տարվա մեջ մենք չենք փորձել կառուցել ուժեղ պետություն, այլ փորձել են կառուցել ուժեղ իշխանություն», ասաց նա՝ ընդգծելով, որ իրենց տեղեկություններով հանրաքեսության բնակչության 50 տոկոսից ավելին գոհ չէ իշխանությունների աշխատանքից, քանի որ մեծ է ժողովրդի եւ իշխանությունների միջեւ եղած անջրպետը:

«Վարչապետացու ունե՞ք» հարցին ՄԱԿ-ի ղեկավարը պատասխանեց. «Ամեն ինչ էլ ունենք»: Իսկ թե երկրի նախագահի պատշոնում առաջադրված որ թեկնածուին կպաշտպանեն, Գ. Արսենյանը նշեց. «Երբ նախագահի ընտրությունների ժամանակ թեկնածուները կառաջադրվեն, մենք մեր դիրքորոշումը կասենք»:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

ՄԱԿ թեկնածու Արթուր Գալստյանը Չարենցավանում մրցելու է Կոտայքի մարզպետի որդու հետ

«Արդար ընտրությունների դեպքում կհաղթեմ», ասում է նա

Հունվարի 28-ին Չարենցավան քաղաքում տեղի են ունենալու քաղաքապետի ընտրություններ: Այստեղ միմյանց մրցակից են ՄԱԿ կուսակցության ներկայացուցիչ Արթուր Գալստյանն ու Կոտայքի հանրապետական մարզպետի անկուսակցական որդին՝ Հակոբ Շահգալդյանը: Չարենցավանի քաղաքապետի ընտրությունը երեկ ՄԱԿ կուսակցության ղեկավար Գուրգեն Արսենյանը դիտարկել է որպես 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների թեստ: ՄԱԿ-ի թեկնածուն՝ Երեւանի «Քանաքեռ-Զեյթուն» բուժմիավորման ֆինանսատնտեսական գծով փոխտնօրեն Արթուր Գալստյանը չարենցավանցի է ու քաղաքի բնակչությանը հայտնի է նրանով, որ մշտապես աջակցել է քաղաքի ու նրա բնակիչների խնդիրների լուծմանը, օգնել է՝ ինչով կարողացել է: Արթուր Գալստյանն իր թեկնածությունն առաջադրել է, քանի որ, իր խոսքերով, սիրում է իր քաղաքը, եւ ուզում է նրա բնակիչների կյանքը բարելավել կոնկրետ գործով, ի պատասխան. «Ես պատկերացնում եմ, թե ինչպես կարելի է անել դա, քաղաքի բյուջեն այնպես ձեւավորել, որ քաղաքի խնդիրները հիմնավորապես լուծվեն», ասում է Ա. Գալստյանը եւ թվում Չարենցավանի խնդիրները՝ անբարեկարգ ճանապարհների ասֆալտապատում, փողոցների լուսավորում, աղբահանության կարգավորում եւ այլն: Քաղաքապետ դառնալուց հետո Ա. Գալստյանը խոստանում է միշտ «տեղում լինել», հասանելի ու հաշվետու լինել համաքաղաքացիներին, ականջալուր լինել քաղաքացիների դիմումներին ու խնդրանքներին, լուծել նրանց պրոբլեմները, եւ ոչ թե չարենցավանցիներն օրեր ու շաբաթներ տանջվեն քաղաքապետարանի դռանը: Մրցակցի լծակները շատ են, եւ Ա. Գալստյանն անհանգստություն ունի ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու առումով. անհանգստության բազմաթիվ առիթներից մեկն, օրինակ, նա նշեց. դպրոցի ուսուցիչները թակում են դռներն ու իրենց աշակերտների ծնողներին թելադրում, թե ում ընտրեն: «Մրցակցիս զենքն իշխանական լծակներն են, իսկ իմ զենքը Չարենցավանի բնակիչներն են», ասում է Ա. Գալստյանը՝ համոզված, որ իր համաքաղաքացիները կընտրեն հաստատապես իրեն, քանի որ ուզում են բարելավված տեսնել իրենց կյանքը: Միաժամանակ մյուս թեկնածուի՝ Հակոբ Շահգալդյանի հետ Ա. Գալստյանը նորմալ հարաբերություններ ունի. «Նորմալ պայքարի դեպքում ով հաղթի՝ մյուսը պետք է շնորհավորի», ասում է ՄԱԿ-ի թեկնածուն, հուսալով, որ հունվարի 28-ին Չարենցավանում ոչ թե «փախցնոցի» կլինի, այլ իսկապես արդար ու մարդավայել ընտրությունների օր:

Երեկ, խոսելով Չարենցավանում կայանալիք ընտրությունների մասին, ՄԱԿ ղեկավար Գուրգեն Արսենյանն ասել է. «ՄԱԿ-ը մասնակցելու է ընտրություններին՝ մի արդյունքի՝ հաղթանակի համար, բայց ոչ միայն կուսակցության, այլեւ հասարակության հաղթանակի համար այն առումով, որ ընտրությունն օրինական լինի, քանի որ Արսենյանի թիմն այդ դիտելու է իբրեւ փորձաքար 2007 թվականի մայիսի համար»:

ՋՈՒԼԻԵՏԱ ԿՈՐԵՅՅԱՆ

ԳՈՒՅԺ

Ասոն Սուքիասյան

Մեր առօրյա կյանքը օրվա մանր ու մեծ ուրախությունների հետ եւ անխուսափելի տխրություն է բերում: Կյանքի ութսունհինգերորդ տարում իր մահկանացուն կնքեց մեր հրաշալի մտավորականներից մեկը՝ խոշոր լեզվաբան, բառարանագիր, հայոց լեզվի փայլուն գիտակ ու ջատագով Ասոն Սուքիասյանը:

Ծանր կյանք ապրած, 1942-ին պատերազմի դաշտում մահից հրաշքով փրկված եւ հաշմանդամ դարձած երիտասարդը տոկունությամբ է ընդունում իր ճակատագիրը եւ նվիրվում է հայոց լեզվի գիտական ուսումնասիրությանը: Պարույր Սեւակի, Վահագն Դավթյանի, Սուրեն Աղաբաբյանի հանրակացարանային սենյակակիցը այդ սերնդի արժանավոր ներկայացուցիչը եղավ գիտության մեջ: Աշակերտեց Հրաչյա Աճառյանին, Գրիգոր Ղափանցյանին եւ մեր մյուս, այսօր արդեն լեգենդ դարձած մեծերին եւ նրանցից սացածն ու տվնանով ձեռք բերած իր խոր ու հարուստ գիտելիքները տասնյակ տարիներ բաժանեց ու սփռեց համալսարանի իր ուսանողներին: Քիչ մարդիկ են վայելել այն խոր հարգանքն ու սերը, որն ուներ բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ասոն Սուքիասյանը համալսարանի ուսանողության եւ պրոֆեսորա-դասախոսական աշխատակազմի մեջ:

Ասոն Սուքիասյանը թողել է գիտական խոշոր եւ մեծարժեք աշխատություններ, որոնց թվում «Հայերենի հոմանիշների բառարան» կոթողային գործը, թողել է երիտասարդ գիտնականների ու աշակերտների իր դասը եւ տասնյակ տարիների իր ուսանողների մեծաթիվ բազմությունը, որոնք խոր հարգանքով ու ակնածանքով կպահեն իրենց ուսուցչի պայծառ հիշատակը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Հանրային ծառայությունների կարգավորման օրենքն այլեւս չի հակասում ՀՀ սահմանադրությանը

ՀՀ Սահմանադրական դատարան է դիմել Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդը «Հանրային ծառայությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու: Երեկ Սահմանադրական դատարանի նիստում հարցի լսումն էր, որը շուրջ երկու ժամ տեւեց եւ հաջորդած դռնփակ խորհրդակցությունում դատարանը որոշում կայացրեց, համաձայն որի սահմանադրությանը համապատասխան ճանաչվեց Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով փոփոխման ենթակա չլինելու դրույթը: ՀՀ սահմանադրության հետ հակասություն ունի նույն օրենքի հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն դրույթը: Այսպիսով, Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի սահմանած սակագները հնարավոր չէ փոփոխել դատական կարգով, բայց հնարավոր է բողոքարկել:

Դիմող կողմի ներկայացուցիչ, «Օրինաց երկիր խմբակցության» անդամ Հովհաննես Մարգարյանը իր ելույթում մասնանշեց առկա հակասությունը վիճարկվող եւ սահմանադրության 18-րդ հոդվածի միջեւ, որը սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրավունք: Պատգամավորի կարծիքով 5 նշանակովի անձից բաղկացած Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովին վերապահված հանրային ծառայությունների սակագինը որոշելու իրավունքը գերակա է եւ անընդունելի, քանի որ թե՛ սպառողը, թե՛ ծառայություն մատուցողը բողոքարկելու իրավունք չունեն, մինչ ՍԴ երեկ կայացրած որոշումը: Մարգարյանը նաեւ փաստեց, որ հանձնաժողովը չնայած օրենքով շնորհված հնարավորությանը՝ չի վերանայել սակագները սահմանող սեփական որոշումները, մինչդեռ վերջին երկու տարիներին զգալի փոփոխություններ է կրել արտարժույթի փոխարժեքը, ինչը սակագների հաշվարկման հիմքում է ընկած:

Պատասխանող կողմի ԱԺ ներկայացուցչի՝ աշխատակազմի Օրենսդրության վարչության պետ Ասոն Խաչատրյանի տեսանկյունից վիճարկվող դրույթը ՀՀ սահմանադրության հետ հակասություն չունի, բայց եւ ձեւակերպման իմաստով հակասությունը ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված իրավունքներին է վերաբերում: Խաչատրյանը հավաստեց, որ սակագների մեծությունը բողոքարկման ենթակա չէ նաեւ այլ երկրներում, այլապես սակագնի սահմանման գործառույթը ուղղակիորեն կանցնի դատարանին: Օրենսդրության վարչության պետի կարծիքով, բողոքարկելի կարող են լինել սակագների սահմանման մեթոդները ու սկզբունքները, բայց ոչ մեծությունը:

Այսպիսով, Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի սահմանած սակագները այլեւս հնարավոր չէ փոփոխել դատական կարգով, բայց հնարավոր է նույն կարգով բողոքարկել:

Ն. Պ.

Երիտասարդները կհավաքվեն Գրինվիչում

Հայաստանում Բրիտանական խորհրդի տեղեկացմամբ, աշխարհի 50 երկրներից, այդ թվում Հայաստանից ընտրված 60 երիտասարդներ հունվարի 17-20-ը կմասնակցեն Գրինվիչում (Լոնդոն) կայանալիք միջազգային համաժողովին՝ խոսելու կրթական համակարգի թերությունների ու բացթողումների մասին: Նրանք կփորձեն լուծումներ առաջարկել կրթական հիմնահարցերին, կանդրադառնան նաեւ դպրոցներում ու համալսարաններում հանդուրժողականության մթնոլորտի անհրաժեշտության խնդրին: Մասնակիցները կընտրեն 6 հոգու՝ համաժողովում ճնարկված հարցերի վերաբերյալ եզրակացությունները Դավոսում հունվարի 24-28-ը կայանալիք համաշխարհային տնտեսական համաժողովում ներկայացնելու համար:

Ռ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լուսաբանների սենյակ / հեռ 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Հանձնարարային շարասենը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
Համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընտրությունները հանելուկ չեն, պատգամավորն էլ «պապա» կատեգորիայից է

2007-ի հոգեբանական, քաղաքագիտական եւ սոցիոլոգիական հնարավոր սցենարներ

2006 թվականի իրադարձությունները եւ 2007 թվականին սպասվող իրողությունները երեկ Մամուլի ազգային ակումբի հանդիպման թեման էին: Հոգեբան **Կարինե Նալչաջյանը** նախապես նշեց, որ անցյալ տարի հասարակության տրամադրությունների, հոգեվիճակի մեջ ինչ-որ կտրուկ փոփոխություններ տեղի չեն ունեցել, կարծես մնալու է եղած իներտ վիճակը: Ինչ-որ ակտիվացումներ սպասվում են: Եթե լուրջ ալեկոծումներ տեղի ունենան, ապա դրանք կվերաբերեն քաղաքականության մեջ ներգրավված հասարակությանը: Հոգեբանի կարծիքով, որոշակի ակտիվություն կմտնի նաեւ ժողովրդի մեջ, բայց խորքային փոփոխություններ թերեւս չլինեն: Հասարակությունը, ըստ Կարինե Նալչաջյանի, ներքաշվում է քաղաքականության մեջ, երբ տեսնում է, որ պայքարի մեջ մտնող կողմերի միջեւ կա որակական մեծ տարբերություն, կարելի է դա անվանել չարի եւ բարու պայքար: Ներկա դրությամբ թե՛ ընդդիմության, թե՛ իշխանության տարբերությունը ժողովուրդը չի ընկալում, ըստ էության, ոչ նա է մի բան, ոչ էլ մյուսը:

Նշելով, թե նկարագրածը կարող է անհույս պատկեր թվալ, հոգեբանը նշեց, որ հասարակական հոգեվիճակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առկա թմբիրից ելքը հայրենասիրական, ազգին վսանգ սպառնալու հանգամանքի բերումով միավորվելու տրամադրություններն են, որոնք չեն կարող լինել ներքին քաղաքական պայքարում: Հուզական պոռթկումների ավելի շուտ կբերեն աշխարհաքաղաքական փոփոխություններով մեզ ուղղված սպառնալիքները: Հոգեբանի կարծիքով, երկիրն առաջ տանելու հույսը կարելի է այսօր դնել ինքնամոռաց, մի փոքր խելահեղ հայրենասիրական ուժերի վրա, որոնք կան, ուղղակի պետք է գտնվեն առաջնորդներ, որոնց հետեւից կգնան հասարակության շերտերը:

Քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանի դիտարկմամբ, նախորդ տարում արտաքին քաղաքականության առումով գլխավոր միտումներից հարկ է նշել ռուս-վրացական հարաբերությունների վատթարացումն ու գազի գների թանկացումը, Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցության մասնակի սառեցումը, հայ-թուրքական սահմանի բացման ցնցարկումը, ԱՊՀ ավելի թուլանալու ընկալումը, Հազարամյակի մարտահրավերների եւ Եվրոպական նոր հարեւանության ծրագրերը եւ այլն:

Ներքին քաղաքականության մեջ Իսկանդարյանը տեղի ունեցածից երկու գործընթաց առանձնացրեց: Նախ, դասական ընդդիմության մարգինալացում, այսինքն՝ այն, ինչ մամուլը հայաստանում կոչում է ընդդիմություն, ավելի ու ավելի դուրս է մղվում քաղաքականությունից: Երկրորդ գործընթացը ելքն է իշխանության ներսում բաժանման, որի արտաքին ցուցանիշ է «Բարգավաճ Հայաստանի» ձեւավորումն ու զարգացումը: Սա, քաղաքագետի կարծիքով, դրական է, քանի որ հենց իշխանության ներսում ձեւավորվում են տարբեր մոտեցումներ ապագայի հանդեպ:

Ինչ վերաբերում է 2007 թ.-ին, ապա Ալեքսանդր Իսկանդարյանը կարծում է, որ ոչ մի հանելուկ չկա, խորհրդարան կմտնեն 2-3 կամ էլ 3-5 խոշոր ուժեր՝ Հանրապետական կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» եւ այլն: Այստեղ դեռ հստակ չէ, թե դրանցից որ մեկն ինչքան ներկայացվածություն կունենա, բայց այդ պայքարը դեռ ընթանում է:

Նախապես նշելով, որ Հայաստանում չկա ընդդիմություն, այլ կան ընդդիմություններ՝ բացասական հատկանիշով միավորված փոքր քաղաքական խմբեր, քաղաքագետը կարծիք հայտնեց, թե Ազգային ժողովում նույն այդ ընդդիմությունները ավելի փոքր ներկայացված կլինեն, քան ներկայումս: Ընդ որում, Իսկանդարյանը նշեց մի հատկության մասին, ըստ որի որոշ պարտված ուժեր անպայման կխոսեն ընտրությունների կեղծման փաստերից, կլինի ինչ-որ փողոցային ակտիվություն, սակայն ընտրված խոշոր ուժերը տարվա մնացած մասը կորոշեն նախագահական ընտրությունների ելքը:

Սոցիոլոգ **Ահարոն Ադիբեկյանը** տեղեկացրեց, որ նոյեմբեր-դեկտեմբերին երեք հարցում է իրականացվել: Նաեւ կատարվել է քաղաքագիտական ուսումնասիրություն: Ըստ այդմ, բնակչության 55 տոկոսը գտնում է, որ երկրում տնտեսական աճ կա, լավածությունը գնալով նվազելու է: Նվազել է աղքատների քանակը, սակայն բնակչության 6 տոկոսը մնում է շատ ծանր վիճակում: Ըստ Ադիբեկյանի ներկայացրած հարցումների, մեր հայրենակիցներն ավելի շատ լավատես են, քան հոռետես: Առավել հետաքրքրական է, որ երկրում տիրող մարդկային հարաբերությունների առումով հարցվածների 75 տոկոսը գտել է, որ դրանք սառն են, եսասիրական, օտարված, սեփական շահեր հետապնդող:

Ընտրությունների շրջանի կապակցությամբ Ահարոն Ադիբեկյանը նշեց, որ քաղաքական դաշտից հեռացել է ուժեղ խաղացող «Օրինաց երկիր» կուսակցությունը, եւ հայտնվել է նոր խաղացող՝ «Բարգավաճ Հայաստանը»: Վերջինս, ըստ Ադիբեկյանի, նախ կվերափոխի իշխանական դաշտը, ապա նաեւ ընտրախաղերի կառուցվածքը: Միտումներ կան, որ ընտրողների մի մասը կգնա ԲՀ-ի կարգախոսների հետեւից, ընդ որում, քանի որ կարգախոսների մեջ մնում է պոպուլիստական երանգը, ապա ըստ սոցիոլոգի, «Բարգավաճ Հայաստանը» ձայներ կտանի ընդդիմադիր դաշտից: Եվ քանի որ այս կուսակցությունը կենտրոնամետ ու իշխանամետ է, իրական պայքարը կգնա ոչ թե ընդդիմության եւ իշխանության, այլ իշխանության մեջ:

Շատ ավելի հետաքրքրական էին մեկ այլ հարցի պատասխանները, որ ստացվել էին հարցումների ընթացքում պատգամավորի ինչպիսին լինելու եւ ինչու հենց այդպիսին լինելու հարցին: Ինչպես ներկայացրեց Ահարոն Ադիբեկյանը, ընտրողները ի դեմս պատգամավորի ուզում են տեսնել ավելի շուտ տնտեսական հատկանիշներ, քան քաղաքական: Այն է՝ ուզում են աջակցող, օգնող, լավ մարդ պատգամավոր: Մի խոսքով, կարելի է որակել, որ հասարակությունը «պապա» է ցանկանում ունենալ ի դեմս պատգամավորի:

Սա թերեւս մեր իրականությունն ամենից հստակ ներկայացնող մոտեցումն է, որ կարող է դրվել ինչպես ձայների վաճառքի, այնպես էլ տարբեր տեխնոլոգիաներով ու կուսակցականաստեղծ գործունեությամբ որոշվող քաղաքականության հիմքում:

Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Արտակ Զաքարյանը եւ «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչ Սուրեն Սուրենյանցը եւս մասնակից էին ՄԱԿ կազմակերպած հանդիպմանը: Սակայն կարեւորել ենք հոգեբանի, քաղաքագետի եւ սոցիոլոգի դիտարկումները, քանի որ կուսակցությունները դեռ կհասցնեն առավելագույնս ներկայացնել սեփական տեսակետները բոլոր հետաքրքրական ու ոչ հետաքրքրական հարցերի առնչությամբ:

ԼՈՒԻԶԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աշխատաշուկան շարունակում է մնալ անհավասարակշիռ

1-ին էջից

Զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցված 102 հազար 172 քաղաքացիներից գործազուրկ է 84 հազար 571-ը: Նրանցից 8268-ին գործակալությունն աշխատանքի է տեղավորել, իսկ 10 հազար 250-ի համար ապահովել ժամանակավոր աշխատանք: Գործազրկության նպաստ ստացել է 12 հազար 500 մարդ:

Այս բոլոր թվերը երեկ ներկայացրեց «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ **Սոնա Հարությունյանը**:

«Ազգի» հարցին, թե քանված զբաղվածությունն ինչ տեղ է գրավում աշխատաշուկայում եւ կոնկրետ որ ասպարեզներում են հայտնաբերվել քանված զբաղվածները, նա պատասխանեց, որ իրենց համակարգում այժմ ամփոփվում են այդ կարգի տվյալները, եւ ամսվա վերջին կներկայացվեն հասարակությանը: Իսկ մինչ այդ՝ բազմաթիվ ստուգումներով «հայտնաբերվել են 250 դեպքեր, երբ գործատուները պայմանագրեր չեն կնքել աշխատողների հետ, եւ ձեւակերպումներ չեն արել: Հայաստանում 2005 թվականի 1 մլն 95 հազարի փոխարեն այսօր 1 մլն 116 հազար մարդ աշխատանք ունի: Այդ տվյալից նույնպես կարելի է եզրակացնել, որ քանված աշխատողներն աստիճանաբար հայտնվում են օրինական դաշտում»:

Գործազուրկների 70 տոկոսը կանայք են, իսկ Երեւանում նրանք գործազուրկների 80 տոկոսն են կազմում: Աշխատաշուկան անհավասարակշիռ է նաեւ մարզերում: Երեւանում գործազուրկների քանակը շատ ավելի փոքր է մարզերից: Գործազուրկների մեծ բանակ կա հատկապես Լոռիում, Սյունիքում, Արագածոտնում, Կոտայքում: Այնուամենայնիվ, զբաղվածության ծառայության միջոցով աշխատանքի տեղավորվածների 40 տոկոսը երեւանաբնակներ են:

Սակայն նույնիսկ մեծ ցանկության դեպքում զբաղվածության գործակալությունն ի վիճակի չէ լուծել մարզային գործազրկության խնդիրը: Հողից ու անասունից բացի այսօրվա գյուղացին այլ աշխատատեղ չունի:

Լավագույն դեպքում գյուղական համայնքների բնակիչներին հնարավոր է լինում ապահովել ժամանակավոր աշխատատեղերով:

Գործազրկության պատճառները թերեւս պետք է փնտրել ոչ միայն տնտեսության, այլեւ մասնագիտական կրթության ու աշխատաշուկայի պահանջների միջեւ առաջացած խոր հակասությամբ: Բուհական բազմաթիվ ֆակուլտետներ տասնյակ հազարավոր իրավաբաններ, բժիշկներ ու բուժքույրեր են պատրաստում, որոնք ուսումն ավարտելուց հետո ձեռնունայն են մնում: Հաշվառված գործազուրկների 5 հազարը ինժեներական մասնագիտություններ ունեն, 2 հազարը՝ տնտեսագետներ են, 2500-ը՝ բուժքույրեր: Հաճախ երիտասարդները բուհ դիմում են բոլորովին անտեղյակ, ավարտելուց հետո աշխատանք կունենա՞ն, թե ոչ: Թերեւս կրթությունը, առավել եւս միջին մասնագիտական կրթությունը պետք է համապատասխանեցնել շուկայի պահանջներին:

Այսօր թափուր աշխատատեղերի 50 տոկոսը բանվորական մասնագիտություններ են: Հաշվառված գործազուրկների մեջ չկան փականագործներ, խառատներ, կոնկավարներ, էլեկտրաեռակցողներ, դրանց պակասը շատ դժվարությամբ է լրացվում: Ժամանակին արհեստագործական ուսումնարանների բավական զարգացած համակարգ կար, որի ոչնչացումից հետո շուկայից անհետացան նաեւ այս մասնագիտացումներով մարդիկ: Երիտասարդ արհեստավորներ այլեւս չկան, իսկ տարեց ու միջին տարիքի մարդիկ մեկնեցին Ռուսաստան:

«Տեղափոխման» դրամաշնորհները ոչ միայն աշխատանք, այլեւ 900-1500 դոլարի աջակցություն են խոստանում կրճատված ուսուցիչներին

Օպտիմալացման պատճառով աշխատանքից զրկվեց շուրջ 7200 ուսուցիչ: 1705 կրճատվածներ աշխատանք գտել են զբաղվածության ծառայության միջոցով:

Այսպես կոչված տեղափոխման դրամաշնորհային ծրագիրը ուսուցիչների մի մասին կրկին աշխատելու հնարավորություն է տվել այն դպրոցներում, որտեղ նրանց մասնագիտությամբ մասնագետներ չկային:

«Այն կրճատված ուսուցիչները, որոնք 2007-ի առաջին կիսամյակում կցանկանան տեղափոխվել (ընտանիքներով կամ միայնակ) հանրապետության այն դպրոցները, ուր իրենց դասավանդած առարկաների կարիքը կա, առաջվանից 3 անգամ ավելի աջակցություն կստանան: Պայմանով, որ 3 տարի անընդմեջ կաշխատեն նույնիսկ հեռավոր գյուղերում: Ընտանիքով տեղափոխվելու դեպքում նրանք կստանան 1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, միայնակ տեղափոխվելու դեպքում՝ 900 դոլարին համարժեք: Լրացուցիչ դրամական օգնություն կտրամադրվի այն ուսուցիչներին, որոնք զբաղվածության որեւէ ծրագրից երբեւէ չեն օգտվել», երեկ տեղեկացրեց «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Սոնա Հարությունյանը:

ԱԳԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՊ

Ինտերնետ հեռախոսակապի ընկերությունները կանջատվեն հունվարի 25-ից

«Արմենտելի» ղեկավարը խոստանում է կոշտ պայքար «կապուղիներ գողացողների» դեմ

Հայաստանի տարածքում ինտերնետ հեռախոսակապի ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեությունը հակասում է թիվ 60 լիցենզիային: Այդ ծառայությունը «Արմենտելի» բացառիկ իրավունքն է: Այս մասին երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց «Արմենտելի» գլխավոր տնօրեն **Օլեգ Բլիզնյուկը**: Նա նաեւ հայտարարեց, որ հունվարի 25-ից «Արմենտելը» կանջատի այդ ընկերությունների կապը, եւ զգուշացրեց բնակիչներին, որ այդ ամսաթվից հետո նրանք չեն կարող ստանալ ինտերնետ հեռախոսակապի ծառայություններ այդ ընկերություններից:

«Նրանք գողանում են մեր կապը: Մենք գողություն թույլ չենք տա», ընդգծեց «Արմենտելի» ղեկավարը: Ի պատասխան **«Ազգի»** հարցի նա հավաստիացրեց, որ ընկերությունն ունի անհրաժեշտ տեխնիկական միջոցներ վերահսկելու համար, թե ովքեր են կապուղի գողանում՝ «որոնց դեմ կոշտ մեթոդներով պայքար է տարվելու»: «Ընկերությունը հայտարարել է, որ ողջունում է առողջ մրցակցությունը եւ հրաժարվելու է իր բոլոր մենաշնորհներից», նշեց Օլեգ Բլիզնյուկը: Սակայն ներկայումս այդ ծառայությունը «Արմենտելի» բացառիկ իրավունքն է, իսկ մենաշնորհից հրաժարվելն էլ մեկ օրում տեղի չի ունենում: Այն պետք է ընթանա համապատասխան իրավական ձեւակերպմամբ: Նույնը վերաբերում է նաեւ այս ոլորտում ապագայում գործունեություն ծավալելու ցանկություն ունեցողներին:

Միաժամանակ Օլեգ Բլիզնյուկը տեղեկացրեց, որ շուկայում գործող մոտ 300 ինտերնետ հեռախոսակապ մատակարարող ընկերությունների անունից հանդես եկող 8 առավել հայտնի ընկերությունների ղեկավարներին առաջարկ է արվել դառնալու «Արմենտելի» դիլերներ: «Մենք հասկանում ենք, որ ընկերությունների փակմամբ մարդիկ են զրկվելու աշխատանքից եւ նրանց փողոց շպրտելը ճիշտ չէ»: «Արմենտելի» ղեկավարի հավաստմամբ, ինտերնետ հեռախոսակապի ընկերություններին արված իրենց առաջարկությունները «շատ լավն են»: Առայժմ խոսել պայմանավորվածության մասին չի կարելի, բայց որոշ ընկերություններ հետաքրքրվել են դրանցով:

«Արմենտելի» կողմից մատուցվող այդ ծառայության որակի եւ գնի վերաբերյալ տրված հարցին Օլեգ Բլիզնյուկը պատասխանեց, որ աշխատանքներ են տարվում կապի որակը բարձրացնելու, եւ որոշ ժամանակ հետո Հայաստանի բնակիչները դա կզգան: Ինչ վերաբերում է այդ ծառայության գնին, ապա այստեղ բարձրացում չի նախատեսվում:

«Արմենտելի» գլխավոր տնօրենը խոստացավ առնվազն եռամսյակը մեկ անգամ հանդիպել լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ եւ այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանում լրագրողներն ավելի պատրաստված են ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ նրանք «մի տեսակ իներտ են»: Այդ պատրաստվածությունը նրան երբեմն «ավելի զգոն լինելու է դդում»:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սիրախա՞ղ անկախության հետ

Աբխազիի խաներեմ երկրներում տարածված Հայկական բարեգործական ընդհանուր միության «AGBU» գունավոր պարբերականի 2006 թ. դեկտեմբերյան համարն ամբողջությամբ նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության տասնհինգամյակին: Հոդվածներով հանդես են եկել լրագրող-մեկնաբաններ Ջոն Հյուզը, Հարություն Խաչատրյանը, Մարիաննա Գրիգորյանը, Գայանե Մկրտչյանը, Արփի Հարությունյանը, Գայանե Աբրահամյանը, Սուրեն Մուսայելյանը եւ Ռիչարդ Կիրակոսյանը: Վերջինս Վաշինգտոնում բնակվող արտաքին քաղաքականության եւ հատկապես ասիական եւ կովկասյան տարածաշրջանների հարցերով զբաղվող մասնագետ-մեկնաբան է: Թարգմանաբար ներկայացնում ենք նրա հոդվածը:

պաշտպանության կարիք ունի: Խորհրդային Միության անկումով անկախություն շնորհվեց Հայաստանին: Հայերին մնում է պահպանել այն ու զարգացնել:

Մասնավորապես երկու հիմնական խնդիրներ են վսանգում Հայաստանի անկախությունը: Առաջինը անկախության կամ, ավելի դիպուկ բնորոշմամբ, կախվածության իրավիճակն է, որը գնալով խորանում է եւ դառնում կործանիչ՝ լրջորեն խոչընդոտելով երկրի տնտեսական, քաղաքական եւ նույնիսկ ռազմական զարգացմանը: Երկրորդը արմատավորված է անկախության բնորոշման մեջ: Հայաստանի անկախությունը կարծես կապկանդված է եւ արգելակված՝ իր վզին փաթաթված հարկադրական սահմանափակումների հետեւանքով: Այն, ինչը պակասում է, անկախության բուն էությունն է կամ այդ գաղափարի, հասկացության ճշգրիտ սահմանման ըմբռնումը, որը ներառում է իսկական ազգային ինքնաբավարարվածություն:

Նշված երկու դեպքերում էլ գլխավոր դերը պատկանում է Ռուսաստանին եւ Հայաստանի անկարողությանը՝ ձերբազատվելու «մեծ եղբոր սվերից»:

Հայաստանի անկախությունը երկու ուղղություններով է առաջ գնացել: Առաջինը՝ Խորհրդային Միությունից անկախանալուց առաջ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ճանապարհով: Ղարաբաղի հարցը շատ երկար ժամանակ ռազմավարական կարեւորություն է ունեցել Հայաստանի համար, եւ հարցի չկարգավորված բնույթը մի տեսակ անապահովության զգացում է առաջ բերել, քանի որ երկիրը շարունակում է մնալ (պատերազմի) սպառնալիքի ներքո: Այս թքնոլորտը, բացի հարեւան Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունից, նաեւ պայմանավորված է Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ առեւտրական եւ տրանսպորտային շրջափակումներով:

Հայաստանն այս առումով միակն է նախկին Խորհրդային հանրապետություններից, որ նման խնդիրների առաջ է կանգնած: Մինչ մյուսներին Ռուսաստանի հետ հարաբերություններն են տագնապեցնում, Հայաստանի պարագայում իր անմիջական հարեւանների հետ ունեցած առեւտրատրանսպորտային դժվարություններն են մտահոգում: Վրաստանը տառապում է անջատողական հակամարտություններով եւ դժվարանում է կարծես պարտադրել իր իշխանությունը երկրի զգալի մի տարածքի վրա: Բայց նույնիսկ այդ լարվածությունը Թբիլիսիի եւ Մոսկվայի միջեւ անմիջական սպառնալիք չի կարող համարվել վրացական պետության համար:

Սպառնալիքների այս թքնոլորտն առավել խորացնում է Հայաստանի անկախության երկրորդ բացասական գիծը: Այս գիծը մասնավորապես ռազմավարական հարաբերության բնույթն է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Ճիշտ է, որ բնական հակվածություն կա Հայաստանի կողմից մնալու ռուսական ուղեծրի սահմաններում, հաշվի առնելով Թուրքիայի ներկայությունը եւ ցեղասպանության փորձառությունը, որն իր այժմեականությունը չի կորցրել ադրբեջանական ագրեսիվ գործողությունների եւ մարտաշունչ սպառնալիքների պատճառով:

Բայց իրական սահմաններ գոյություն ունեն նույնիսկ ռազմավարական գործընկերությունների կամ համագործակցությունների մեջ: Եվ այդ սահմանը հարաբերությունների կառուցվածքում պետք է փնտրել: Հայաստանը ոչ թե որպես հավասար գործընկեր է հանդես գալիս, այլ ծառայում է որպես պլասֆորմ՝ Ռուսաստանի համար: Այս միակողմանի հարաբերության ամրապնդմանը նպաստում է հայ ղեկավարների այն սխալը, որ նրանք թերագնահատում են Հայաստանի ռազմավարական նշանակությունը Ռուսաստանի համար, միաժամանակ գերագնահատելով Ռուսաստանի ռազմավարական նշանակությունը Հայաստանի համար: Սա մի կողմից երկրի ընդհանուր զարգացմանն է խոչընդոտում, մյուս կողմից՝ խափանում անկախության ամրապնդումը:

Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունների անհամաչափությունն ընդգրկում է երեք ոլորտներ՝ տնտեսական, քաղաքական եւ ռազմական: Հետաքրքրական է, որ արտաքին քաղաքականությունը դուրս է մնում այդ ոլորտներից: Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ զգուշավոր հավասարակշռություն պահպանելու կամ «կոմպլեմենտարիզմի» պետական քաղաքականությունը մինչ օրս լավ է գործել եւ արդյունք տվել: Այդ ճկուն քաղաքականության շնորհիվ Հայաստանը կարողացել է խորացնել իր կապերը ՆԱՏՕ-ի եւ Արեւմուտքի հետ առանց լրջորեն վնասելու իր հարաբերությունները Ռուսաստանի եւ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ:

Ռուսաստանից Հայաստանի աճող կախվածությունը առավել ակնառու է տնտեսության բնագավառում:

Անկախ, բայց պարտական

Հայաստանի խոցելիության պատճառները պետք է փնտրել վաղ ինքնուսականներից մինչեւ միջին ինքնուսականներն ընկած ժամանակահատվածում, երբ համապատասխանաբար աճեց կաբառակերությունը եւ անկում ապրեց օրենքի իշխանությունը: Այս ժամանակ էր, որ գագաթնակետին հասան «գույքի էժան գնահատումն» ու «ռեսուրսների թալանը» սեփականաշնորհման մի շարք կասկածելի գործարքներում:

Համեմատած ուրիշ խորհրդային հանրապետությունների հետ՝ այս երեւույթը անսովոր չէր, ոչ էլ ավելի քայքայիչ կամ աղակալունացնող, քան այլ վայրերում: Բայց գլխավոր տարբերությունն այն էր, որ Հայաստանի պարագայում կարեւոր տնտեսական ոլորտները բաժին ընկան օտար, ավելի ճիշտ՝ ռուսական իշխանություններին:

Ամենախորհրդանշականը, անշուշտ, «գույք պարտքի դիմաց» գործարքն էր 2002-ին, որի արդյունքում Ռուսաստանը չեղյալ համարեց Հայաստանի 100 միլիոն դոլարից մի փոքր պակաս պարտքը, եւ փոխարենը ստանձնեց առանց այն էլ թվով ֆիզ մարտավարական օբյեկտների վերահսկողությունը: Դրանց թվում էներգիայի բնագավառի ձեռքբերումը Ռուսաստանին շնորհեց զգալի առավելություններ:

Հայաստանը դարձավ զոհ նաեւ այլ հանրապետությունների հետ Ռուսաստանի ունեցած խնդիրների դեպքում: 2005 թվի դեկտեմբերին Հայաստանին մատակարարվող բնական գազի գինը համարյա կրկնապատկվեց: Միայն որոշ բանակցություններից հետո հայկական կողմին հաջողվեց 3 ամսով հետաձգել թանկացումը: 2006 թվի ապրիլին բնական գազի գինը 56 դոլարից դարձավ 110 դոլար: Մի քանի օր անց Հայաստանի կառավարությունը նոր պայմանագիր կնքեց ռուսական պետական «Գազպրոմի» հետ, որով Հայաստանի ջերմաէլեկտրակայանի 5-րդ բլոկը եւս հանձնվեց Ռուսաստանին կանխիկ 60 միլիոն դոլարի փոխարեն: Ավելին, Ռուսաստանը ի վիճակի եղավ ճնշում բանեցնելու եւ ներազդելու բնական գազի խողովակաշար կառուցելու վերաբերյալ Հայաստանի եւ Իրանի ձեռք բերած համաձայնության վրա: Այդ ազդեցության հետեւանքով զգալիորեն նվազեց խողովակաշարի սկզբնական երկարությունը, թույլ չտալով, որ մրցունակ դառնա ռուսական էներգիայի աղբյուրների համար: Դեռ լուրեր են պտտվում, որ «Գազպրոմի» գործադիրները ցանկանում են ընդհանրապես ձեռք գցել Հայաստան-Իրան ամբողջ խողովակաշարը:

Ռուսական ազդեցության մեկ այլ բացասական երեւույթը դրսեւորվեց այն ժամանակ, երբ Ռուսաստանը փակեց հուլիսին իր սահմանը Վրաստանի հետ: Արեւելք-արեւմուտք շրջափակման պայմաններում Հայաստանի տնտեսության համար դեպի հյուսիս ճանապարհի փակումն աղետալի էր, հատկապես որ տեղի ունեցավ առանց նախազգուշական կարգադրությունների:

Նույնքան կարեւոր էին դեպի Հայաստան հոսող դրամական փոխադրումները, որոնց 80 տոկոսը անցյալ տարի գալիս էր Ռուսաստանից: Մինչ պաշտոնական տվյալներն ընդամենը 10 տոկոս են նշում, առանձին անկախ աղբյուրները մինչեւ 25 տոկոս են հաստատում համախառն արտադրանքում այդ փոխադրումներին: Այդ դրամական փոխադրումները 2005-ին 940 միլիոն դոլարի հասան, իսկ 2006-ին անցան 1 միլիարդը: Սա նշանակում է մեծապես կախվածության մեջ լինել այդ ֆինանսական աղբյուրից, որը նաեւ կարող է տնտեսության մեջ ուղղորդիչ դեր կատարել: Ռուսաստանում աշխատելու վրա դրված այս մեծ կարեւորությունը նաեւ զուգակցվում է այնտեղ ծայր առած վտանգավոր մի ալիքով, որը հատկապես որպես թիրախ ընտրում է Հայաստանից, Կովկասից եւ Կենտրոնական Ասիայից եկած աշխատավորներին: Ռուսաստանի կողմից այդ փոխադրումները սահմանափակելը կամ կրճատելը նույնպես կարող է բացասական ազդեցություն թողնել Հայաստանի եւ նրա բնակիչների վրա:

Ռուսաստանի հետքերով

Տնտեսական կախվածությունից բացի հայ-ռուսական հարաբերությունների անհամաչափությունը զգալի է նաեւ քաղաքական ոլորտում, որն առավել մեծ սպառնալիք է Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը եւ օրենքի իշխանության հաստատմանը:

Այս սպառնալիքի արմատները գնում են ավանդաբար կառավարման ռուսական մոդելին հետեւելու հայ քաղաքական գործիչների սովորությանը: Ընդօրինակման այս գործընթացի հետեւանքով հայկական քաղաքականությունը ռուսական քաղաքականությանը նմանվելու եզրեր է ձեռք բերել: Նրանից վերցրել է հատուկ մարտավարական եւ ռազմավարական դասեր, այդ թվում նաեւ անհանդուրժողականության դրսեւորումը անկախ լրատվամիջոցների եւ քաղաքական ընդդիմության հանդեպ: Ուժեղ նախագահական ինքնիշխանության ռուսական այս մոդելը կարծես համահունչ է հայ քաղաքական էլիտայի նախասիրություններին:

Միանձնյա ուժեղ կառավարման համակարգի ամրապնդումը վտանգում է ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում: Այս առումով չափազանց կարեւոր են 2007-ի խորհրդարանական եւ 2008-ի նախագահական ընտրությունները:

Հայ-ռուսական հարաբերությունների անհամաչափության երրորդ խնդիրը ռազմական աջակցության կամ անվտանգության ոլորտում է: Թեեւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցելուց հետո (1996-ին) Հայաստանը խորացրել է իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ, նույնիսկ այն աստիճան, որ Կոսովո եւ Իրաք է ուղարկել իր զորամիավորումները միջազգային խաղաղապահների շարքերը լրացնելու համար, այդուհանդերձ Հայաստանի պաշտպանական քաղաքականության գրեթե բոլոր ասպեկտները եւ ռազմական ծրագրերի մեծամասնությունը դեռեւս մնում են Ռուսաստանից կախյալ վիճակում: Այս հարաբերությունը, որն ամրապնդված է բարեկամական պայմանագրով, նախատեսում է փոխադարձ օժանդակություն ցուցաբերել ռազմական հարձակումների դեպքում եւ ռուսական զինամթերքի, պահեստամասերի մատակարարում Հայաստանին: Համաձայնությունը իրավունք է տալիս ռուսական զորքերին մնալու Հայաստանում մինչեւ 2025 թիվը: Բայց հետաքրքրականն այն է, որ Հայաստանը որպես հյուրընկալ երկիր միակ պետությունն է, որ ինքն է հոգում իր սահմաններում օտար (ռուսական) զորքերի ներկայության ծախսերը:

Ռուսական զորքերի ներկայությունը որպես անվտանգության երաշխիք է դիտվում: Սակայն ռուսական զինվորականությունը ամբողջովին իր վերահսկողության տակ է վերցրել հայկական ռազմական կառույցների որոշ ոլորտներ, ինչպիսիք են, օրինակ, օդուժի եւ օդային պաշտպանության ոլորտները: Սա նշանակում է երկրի ազգային անվտանգությունը գրավի տակ դնել բավական երկար ժամանակ: Ստեղծված իրավիճակին առավել սուր բնույթ է հաղորդում այն կույր, բայց թյուր հավատը, թե Հայաստանը այլընտրանք չունի:

Թեեւ շատերը Հայաստանի անվտանգությունը կապում են Ռուսաստանի ծիրում գտնվելու հանգամանքի հետ, սակայն նրանք պետք է հասկանան, որ իսկական անկախությանը կարելի է հասնել (եւ պահպանել) միայն հիմնվելով սեփական, ազգային շահերի վրա: Միայն հարաբերություններում այդ անհամաչափությունը վերացնելու միջոցով կարելի է ողջունել անկախության հաստատումը Հայաստանում:

ՌԻՉԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ,

Պետքարտուղար Ռայսի շրջայցը տարածաշրջան հարցականներ է առաջացնում

Հակառակ դրան նախագահ Ահմադինեժադը շրջագայությամբ Վաշինգտոնի դեմ դաշինք է ձևավորում

Հունվարի 14-ին, երբ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը շրջայցով ուղեւորվում էր տարածաշրջան՝ հանդիպելու Պաղեստինի, Հորդանանի, Իսրայելի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ Քուվեյթի ղեկավարների հետ, Լատինական Ամերիկայի երկրներում իր շրջագայությունն էր ավարտում Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:

Կոնդոլիզա Ռայսը տարածաշրջան էր ուղեւորվել նախագահ Ջորջ Բուշի իրաքյան նոր ռազմավարությանը տարածաշրջանի երկրների աջակցությունն ապահովելու գլխավոր առաջադրանքով, որպեսզի ստեղծի այդ երկրներում ԱՄՆ-ի ազդեցության վերականգնման համար անհրաժեշտ նախադրյալներ: Քանի որ պետքարտուղարն այդ երկրներում անընդմեջ Իրանին էր մեղադրում՝ Իրաքի ներքին գործերին միջամտելու մեջ, ուստի նա առաջադրանքին համապատասխան նրանց ակամա հակադրում էր Թեհրանին:

Ինչ վերաբերում է Մահմուդ Ահմադինեժադին, ապա նրա ուղեւորությունը Լատինական Ամերիկա վերջին չորս ամիսներին այնտեղ կատարված երկրորդ շրջագայությունն էր: Դրա շրջանակներում Իրանի նախագահը եղել է Վենեսուելայում եւ Նիկարագուայում, հանդիպելով հաջորդաբար նախագահներ Ուգո Չավեսի եւ Դանիել Օրտեգայի հետ, ապա անցել է Էկվադոր, մասնակցել երկրի նորընտիր նախագահ Ռաֆայել Կոռեայի երդման արարողությանը: Էկվադորի մայրաքաղաք Կիտոյում Ահմադինեժադը հանդիպել է նաեւ Բոլիվիայի նախագահ Էվո Մորալեսի հետ:

Վենեսուելայի, Նիկարագուայի, Էկվադորի եւ Բոլիվիայի նախագահների հետ Իրանի նախագահի հանդիպումների մանրամասները հայտնի չեն: Հակառակ դրան միանգամայն ակնհայտ են այս երկրների հակաամերիկյան կողմնորոշումն արտաքին քաղաքականության մեջ: Թերեւս այդ առումով պատահական չէ, որ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի Լատինական Ամերիկայի երկրներ կատարած շրջայցը միջազգային շրջանակներում գնահատվել է որպես դաշինքի ձեւավորման դրսեւորում ընդդեմ Վաշինգտոնի վարչակարգի: Այդ ընթացքում Իրանի նախագահը հանդիպումներում հայտարարել է. «Մենք ունենք ընդհանուր շահեր եւ ընդհանուր են մեր թշնամիները»:

Որքան շուտ ձեւավորվի հակաամերիկյան, այսպես կոչված, դաշինքն ու ընդլայնվի դրա կազմը, այնքան կմեծանա Վաշինգտոնի ճնշումներին դիմակայելու Իրանի հնարավորությունը: Իսկ այս հանգամանքը տարածաշրջանում կնպաստի Իրանի դիրքերի ամրապնդմանը, իսլամական աշխարհում՝ ազդեցության աճին: Դրա հետ կապի նաեւ իրանական պետության միջազգային հեղինակությունը: Ամենեւին չի բացառվում, որ միջազգային հեղինակության հետագա աճն սրիպի Վաշինգտոնին հակադրվելու փոխարեն երկխոսության մեջ մտնել Իրանի հետ:

Համենայն դեպս, Վաշինգտոնի վարչակարգի դեմ դաշինք ձեւավորելու առաջադրանքը կատարման առումով նախագահ Մահմուդ Ահմադինեժադի համար անհամեմատ գերադասելի է, քան պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսինը: Այն առումով, որ նախագահ Բուշի իրաքյան նոր ռազմավարությունը ոչ միայն լիարժեք աջակցություն չի գտնում տարածաշրջանի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան, այլեւ դրան Պաղեստինի հետ առարկում է նաեւ տարածաշրջանում ԱՄՆ-ի գլխավոր դաշնակից Իսրայելը, իսկ դաշնակիցներից Թուրքիան՝ ակնհայտորեն հակադրվում:

Թերեւս այդ հակադրությունն էր, որ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը Թուրքիային չէր ընդգրկել տարածաշրջան կատարած շրջայցի ծրագրում: Այս ամենը ցույց է տալիս, որ առաջադրանքի կատարման պարագայում խնդիրը Կոնդոլիզա Ռայսի դիվանագիտական կարողություններն չեն, այլ նոր ռազմավարության ողի տակ հին մեթոդներով Իրաքում ռազմական հաղթանակ տանելու պատճառական Վաշինգտոնի հաշվարկները, որի անհնարինության մասին դեռեւս դեկտեմբերի 20-ին BBC-ն տված հարցազրույցով նախագահ Ջորջ Բուշին ուղղակիորեն զգուշացրել էր «Նոր պահպանողականների» գորշ կարդինալ Հենրի Քիսինջերը:

ՀԱՅՈՐ ՉԱՔԱՐՅԱՆ

Էկվադորի նոր նախագահը միացավ հակաամերիկյան ճամբարին

2006 թ. նոյեմբերի 25-ի ընտրություններում հաղթած Ռաֆայել Կոռեան պատճառականության երդում տալուց անմիջապես առաջ հայտարարել է, որ ինքը Լատինական Ամերիկայում միանում է Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսի հակաամերիկյան ճամբարին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 43-ամյա Կոռեան ստեսագետ է եւ ձախ հայացքների տեր:

Վերջին տասնամյակում Էկվադորում ընտրված 3 նախագահներից ոչ մեկը չի կառավարել մինչեւ նախագահական ժամկետի վերջը, այսինքն 4 տարի: Երեքն էլ պատճառանք են արվել ժողովրդական խռովությունների հետեւանքով:

Ռաֆայել Կոռեայի երդմնակալության արարողությանը ներկա են եղել լատինաամերիկյան սոցիալիզմի բոլոր գլխավոր ներկայացուցիչները, այդ թվում Վենեսուելայի նախագահ, Կոռեայի բարեկամ Ուգո Չավեսը, Բոլիվիայի, Չիլիի, Բրազիլիայի եւ Նիկարագուայի նախագահներ Էվո Մորալեսը, Միշել Բաչելեթը, Լուիս Ինասիո Լուլա դա Սիլվան եւ Դանիել Օրտեգան:

Արարողությանը ներկա է եղել նաեւ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Տարածաշրջանում շրջագայող Ահմադինեժադը փորձում է նոր աջակիցներ գտնել Լատինական Ամերիկայում: «Ֆիգարո» թերթը ընդգծում է, որ այնտեղ Իրանի միջուկային ծրագրի հարցում Ահմադինեժադի գլխավոր դաշնակիցը տարածաշրջանային հակաամերիկյան ճամբարի ղեկավար, Վենեսուելայի ղեկավար Ուգո Չավեսն է:

Հակաամերիկյան տրամադրություններով հայտնի Կոռեայի հաղթանակն ամրապնդում է լատինաամերիկացի ձախերի դիրքերը, տարածաշրջանում թուլացնելով ԱՄՆ-ի ազդեցությունը: «Փոխադարձ հարգանքի» սկզբունքի ջատագով Կոռեան արդեն ձեռնարկել է մի շարք հակաամերիկյան միջոցներ:

Նոր նախագահն զգուշացրել է, որ ինքը դեմ է ԱՄՆ-ի հետ ազատ փոխանակման որեւէ պայմանագրի կնքմանը: Նա մտադիր չէ երկարաձգել 1999 թ. այն պայմանագիրը, որն ամերիկացիներին թույլ է տալիս օգտվել էկվադորյան Մանտա քաղաքի ռազմակայանից:

Կոռեան մտադիր է իրականացնել «քաղաքացիների հեղափոխություն», վերանայել էկվադորի արտաքին պարտքը եւ դրա հետ կապված վճարումներ անել «երկրում աղքատության խնդիրը լուծելուց հետո»:

Որոշ տեղեկությունների համաձայն, Կոռեան մտադիր է նաեւ ցրել խորհրդարանը, որտեղ ներկայումս մեծամասնություն են կազմում իր ախոյանի՝ բանանային magnus Ալվարո Նոբոայի կողմնակիցները:

Պ. Ք.

ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Իսրայելն ու Սիրիան հաշտության գաղտնի բանակցություն են վարել

Եգիպտոսում 2004 թ. սեպտեմբերից մինչեւ 2006 թ. հուլիս վարած գաղտնի բանակցությունների ընթացքում Իսրայելը եւ Սիրիան որոշել են հաշտության երկկողմ պայմանագրի կնքման պայմանները: Այդ մասին տեղեկացնում է իսրայելական «Հաարեց» թերթը:

Պայմանավորվածության համաձայն, Իսրայելը պետք է Սիրիային հանձներ Գոլանի բարձունքները, վերականգնելով 1967 թ. հունիսի 4-ի սահմանը: Սիրիան պահանջել է այս փոփոխությունն իրականացնել 5 տարվա ընթացքում, բայց Իսրայելը համաձայնել է դա անել 15 տարում:

Նախատեսված է եղել Կիներեթ լճի երկայնքով ստեղծել բուֆերային գոտի, որի զբոսայգին պետք է բաց լիներ սիրիացի եւ իսրայելցի այցելուների համար: Նոր զբոսայգին պետք է զբաղեցներ Գոլանի տարածքի զգալի մասը:

Ընդսմին Իսրայելը պետք է պահպաներ Հորդանան գետի եւ Կիներեթ լճի ջրերի օգտագործման վերահսկողությունը:

Բացի դրանից, երկու կողմերը պարտավորվել էին 1-4 հարաբերակցությամբ (հօգուտ Իսրայելի) ապառազմականացնել սահմանամերձ տարածքները:

Սիրիան պարտավորվում էր դադարեցնել օգնությունը «Հզբոլլահ» շարժմանը եւ «Համաս» խմբավորմանը, ինչպես նաեւ հրաժարվել Իրանի հետ գործընկերային հարաբերություններից: «Հաարեցի» տվյալներով, պայմանավորվածությունները վավերականորեն չեն արձանագրված:

Գաղտնի բանակցություններն ընդհատվել են այն բանից հետո, երբ Սիրիան պահանջել է դրանք դարձնել պաշտոնական եւ բանակցել արտգործնախարարների տեղակալների մակարդակով՝ ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցչի մասնակցությամբ:

2006 թ. զոհվել են 34 հազար խաղաղ իրաքցիներ

ՄԱԿ-ը տվյալներ է հրապարակել Իրաքի խաղաղաշնչական բնակչության 2006 թ. կորուստների վերաբերյալ: Ասուլիսի ընթացքում նշում է, որ ՄԱԿ-ի տվյալները մի քանի անգամ գերազանցում են ավելի վաղ Իրաքի կառավարության ներկայացրած թվերին:

Իրաքին օգնող միջազգային խմբի (UNAMI) գնահատումների համաձայն, 2006 թ. Իրաքում զոհվել է 34.452 խաղաղ բնակիչ, 36.685 ուրիշներ վիրավորվել են:

ՄԱԿ-ի տվյալները հիմնված են Իրաքի առողջապահության նախարարության, հիվանդանոցներից ստացված լուրերի եւ Բաղդադի դատաբժշկության ինստիտուտի տվյալների վրա:

Միայն նոյեմբեր-դեկտեմբերին զոհվել է 6.376 իրաքցի, մեծ մասը՝ հրազենից:

Բացի դրանից, 2006 թ. տարեվերջին Իրաքում բանտարկված էր 30.842 մարդ (14.534-ը՝ ամերիկյան զորքերին ենթակա բանտերում):

Իրաքի կառավարության պաշտոնական տվյալների համաձայն, 2006 թ. խաղաղ բնակչության զոհերի թիվը ընդամենը 12.357 է:

Կաստրոյի վիճակը վատ է

Կուբայի նախագահ Ֆիդել Կաստրոյի առողջական վիճակը ծանր է: Այդ մասին տեղեկացնում է իսպանական «Էլ Պայիս» թերթը, վկայակոչելով Հավանայի «Գրեգորի Մարանյոն» հիվանդանոցի երկու բժիշկների խոսքերը: Հենց այդ հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր Կաստրոյին բուժզննության ենթարկել 2006 թ. դեկտեմբերին:

Թերթը նշում է, որ կուբացի ղեկավարը ենթարկվել է հաստ աղիքի երեք վիրահատության, ընդսմին երեքն էլ անհաջող են եղել: Երրորդ վիրահատությունից հետո դրվել է պրոթեզ, որի նշանակությունը չի նշվում: Բժիշկներն ասում են, որ իրականացվում է հիվանդի ներերակային սնուցում:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Կաստրոյի ապաքինմանը խոչընդոտում է հետվիրահատական կարերի վատ սերտաճումը: Բժիշկները պնդում են, թե Կաստրոն խաղցկեղ չունի, մինչդեռ ԿՀՎ տվյալներ վկայակոչող ամերիկացիները հակառակն են պնդում:

Ռուսաստանում աճում է գարեջրի եւ կոկտեյլների սպառումը

Բրիտանական «Եվրոմոնիթոր» հետազոտական ընկերության տվյալների համաձայն, անցյալ տարի Ռուսաստանում գինու վաճառքը բնական արտահայտությամբ նվազել է 7,5 տոկոսով (դրամական արտահայտությամբ՝ 2,2 տոկոսով): Օղու վաճառքը նվազել է 3,9 տոկոսով (դրամական արտահայտությամբ՝ 11,2 տոկոսով):

«Վեդոմոստի» թերթը նշում է, որ դա Ռուսաստանում իրականացված ալկոհոլային բարեփոխման եւ Վրաստանի ու Մոլդովայի դեմ ծավալված «գինու պատերազմի» հետեւանքն է:

Սակայն վերլուծաբաններն արձանագրում են, որ Ռուսաստանում օղու վաճառքի ծավալները նվազում են արդեն մի քանի տարի: 2000 թ. համեմատությամբ 2006 թ. օղու վաճառքը նվազել է 15 տոկոսով: Սպասվում է, որ այդ միտումը կպահպանվի:

Ինչ վերաբերում է գինուն, «Եվրոմոնիթորը» կանխատեսում է դրա վաճառքի ծավալների աճ, հիմնականում՝ ներմուծվող թանկ գինիների հաշվին: Բնակչության եկամուտների աճի կապակցությամբ վերջիններս դառնում են մատչելի ապրանք:

2006 թ. աճել է գարեջրի վաճառքը (բնական արտահայտությամբ 10,4 տոկոսով, դրամական արտահայտությամբ՝ 22 տոկոսով): Վաճառվել է 16,4 միլիարդ դոլարի գարեջուր: Ոգելից կոկտեյլների վաճառքը բնական արտահայտությամբ աճել է 17 տոկոսով (դրամական արտահայտությամբ՝ 33,8 տոկոսով): Ըստ կանխատեսումների, այս միտումը կպահպանվի առաջիկա 5 տարիներին:

Պ. Ք.

Հայ երգի հնչյունները թովեցին Ֆոնտենվրոյի թագավորական աբբայության հասարակությանը

Շաբաթ երեկոյան Ֆոնտենվրոյի թագավորական աբբայության Ա-վենի ավանդական համերգն այս անգամ ներկայացնում էր հայ երգչախմբային արվեստը:

Արևմտյան մշակութային կենտրոնի համար վերադարձը դեպի ավանդական երաժշտաբերջան այս անգամ նշանավորվում է գործունեության անժխտելի վերելքով:

Մեծ սեղանատանը տրված համերգի հյուրը 1992 թվականին Երևանում ստեղծված, հայ երաժշտության հայր Կոմիտասի ստեղծագործությունները կատարող «Հովեր» երգչախումբն էր:

Հազարամյակից ավելի պատմություն ունեցող հայ երգարվեստը (նշենք, որ որոշ եկեղեցական երգեր 1600 տարեկան են) համընդհանուր ճանաչում ունի արդեն կես դար ի վեր:

«Հովերի» խմբավար և միևնույն ժամանակ ղեկավար Սոնա Հովհաննիսյանը Կոմիտաս վարդապետի զարմանահրաշ երաժշտության շուրջ է միավորել պետական երաժշտանոցի մի շարք շնորհաշատ երիտասարդների, որոնք նաև հանդես են գալիս թատերականացված խմբերգային ներկայացումներում:

Հինգ տարի առաջ հայկական ծագում ունեցող հայտնի կանադացի կինոռեժիսոր Ատոմ Էգոյանի հրաշալի «Արարատ» ֆիլմը ամբողջ աշխարհում հայտնի դարձրեց «Հովեր» երգչախմբի արվեստը:

Ֆոնտենվրոյում համույթն ավարտեց իր եվրոպական շրջայցը՝ հրավիրված ձեռք բերելով ճանաչում բավական լայն հասարակության կողմից:

Համերգը երկու մասից էր. առաջինում խմբի 11 տղամարդ անդամները կատարեցին Սուրբ պատարագը, իսկ երկրորդ մասում բոլոր 24 անդամները՝ եկեղեցական և ժողովրդական երգեր, որոնք ասես իսկական հաղորդություն լինեին դահլիճի և երգչախմբի միջև: Այդ հաղորդությունը սառնաբունչ գիշերով, մոմերի լույսի ներքո, որպես հարգանքի տուրք, երաժշտությամբ սփռվեց և տարածվեց նաև աբբայության եկեղեցու տարանախանդակների վրա:

Ողջ երեկոյի ընթացքում ունկնդիրները չդադարեցին հիանալ երգչախմբի կատարողական և խմբավարական արվեստի բարձր մակարդակով, նրանց միջև առկա համերաշխությամբ և հաստատունությամբ:

Վերջին համարը, որն իրենից ներկայացնում էր մշակում ավանդական պարերի տեսքով, ունկնդիրները ընդունեցին երկարատև բուռն օվացիաներով:

«Ուստիներ դը լ'Էստ»,
Ֆրանսերենից թարգմանեց
ԹԱԳՈՒՀԻ ԲԼԲՈՒԼՅԱՆԸ

ԲԵՆԵՖԻՍ

«Երիտասարդականը» մեկ տարեկան է

Դեկտեմբերի վերջին՝ նախատոնական օրերին, «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում, իսկապես, տոնական երեկո կայացավ: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նորելուկ երիտասարդական նվագախումբը գեղեցիկ ծրագրով ամփոփեց տարին և նշեց իր ծննդյան առաջին տարեդարձը: 2005 թ.-ի նոյեմբերին, կոնսերվատորիայի մի խումբ ուսանողուհիների նախաձեռնությամբ կազմավորվեց մի նոր՝ «երիտասարդական» խորհրդանիշով նվագախումբ: Երեւույթն, ինքնին, արտառոց չէր այնպիսի մի մշակութային օջախի համար, ինչպիսին կոնսերվատորիան է, սակայն աննախադեպ էր գլխավոր դիրիժորի ինքնությունը: Անկասկած, նվագախմբի ղեկավարի մասնագիտությունը երաժշտական մասնագիտությունների շարքում ամենաբարդ եւ խորհրդավորներից է՝ պահանջող բազմաբովանդակ հմտություններ եւ վարպետություն, նաեւ անհատական հատկանիշների եւ հասունության մի ողջ փունջ: Եվ պատահական չէ, որ անգամ ուսանողական կոլեկտիվների ղեկը հիմնականում գտնվում է արդեն հասուն եւ կայացած արտիստների ձեռքերում: Իսկ այս անգամ «Երիտասարդականի» ղեկավարությունը վստահվեց եւս ուսանողի՝ ջութակահար (պրոֆ. Բ. Վարդանյանի դաս.) եւ դիրիժոր (պրոֆ. Յ. Դավթյանի դաս.) Սերգեյ Սմբատյանին: Նման համագործակցությունն արդեն խոստումնալից էր եւ պիտի աղահովեր նորաստեղծ կոլեկտիվին ներքին լիցք եւ ավյուն, գեղարվեստական էներգիա, հանդուգն խիզախումներ՝ վայել իրենց տարիքի: Եվ աղաիովեց: Չնայած իր մանուկ հասակին՝ «Երիտասարդականն» արդեն հանդես է եկել Մոսկվայում եւ Փարիզում, ներկայացնելով մեր երկիրը մշակութային տարվա շրջանակներում, բազմիցս ելույթներ է ունեցել Երեւանում, ներկայացել է հեռուստատեսությամբ: Այլ կերպ, նվագախումբն, իսկապես, լուրջ միտումներ ունի, պրոֆեսիոնալ հայտ է ներկայացնում եւ հետեւողականորեն մագլցում է վարպետության աստիճաններով: Յուրաքանչյուր ծրագրի իրագործմամբ Սերգեյ Սմբատյանը եւ նվագախումբը դնում են իրենց առջեւ որոշակի գեղարվեստական խնդիրներ, ձգտում հնարավորինս հաղթահարել եւ միասնական ուժերով մի քայլ եւս կատարել վարպետացման ճանապարհին: Այս անգամ համերգի ծրագիրն ընդգրկում էր միայն երկու ստեղծագործություն, սակայն ինչ ստեղծագործություն: Թե՛ Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան եւ թե՛ Չայկովսկու դաշնամուրային կոնցերտը, շնորհիվ իրենց հսկայական կատարողական պատմության եւ ավանդույթի, հարյուրավոր համեմատության եզրեր եւ զուգահեռներ են առաջացնում, ինչպես նաեւ հեղինակավոր ազդեցության հմայքի տակ ընկնելու վտանգ ստեղծում: Այսպիսի ծրագիրը որքան գայթակղիչ է, այնքան եւ փորձաքար կարող է դառնալ անգամ հնուս կատարողների համար: Նվագախումբը համերգի ընթացքում բացահայտվեց՝ ուրվագծելով հետագա աճի լայն հեռանկար: Ակնհայտ է, որ կոլեկտիվն ունի ավելի մեծ ներուժ, քան ի հայտ է բերում դեռեւս այսօր: Սա մեծ գրավական է, հուսադրող եւ խոստումնալից: Համաշխարհային բեմահարթակներում մեր օրերի ամենահնչեղ անուններից մեկը՝ Դենիս Մացուեւի մասնակցությունը համերգին առանձնահատուկ փայլ եւ շեղություն պարգեւեց: Միեւնույն ժամանակ թույլ տալով Ս. Սմբատյանին ցուցաբերել նվագակցության նրբին արվեստում անսամբլի լավ զգացողություն, շարժման առանցք պահելու կարողություն, զարկերակ լսելու ձիրք: Սա դաշնակահարի երրորդ այցելությունն էր Երեւան, որտեղ նա արդեն երկրպագուների լայն բանակ էր ձեւավորել: Նոր, թերեւս, XXI դարի միտումների մեջ կազմավորվող, կատարողական ոճի, ձեւի, տիպի անսահմանորեն ազատ եւ անկաշկանդ, իրապես Լիստյան մասշտաբայնությամբ, փայլուն, անբասիր տեխնիկական հնարավորություններով, հնչյունի բազմերանգ գունավորումներով՝ ինչպես «Պիանո» մինչեւ հզոր «Ֆորտիսիմո», սեփական վիրտուոզ մեջբերումներով, երբ դաշնակահարը պարզապես հանդգնորեն ճախրում է ընդունված ավանդույթների եւ գրեթե անթույլատրելի աղերսներում, հմայեց եւ ցնցեց լսարանը: 30-ամյա դաշնակահարն իր զգացողություններով ներդաշնակորեն ձուլվել էր «Երիտասարդականի» երիտասարդների հետ:

Նվագախումբը մեկ տարեկան է: Հայտը ներկայացված է: Առջեւում կա երկար ճանապարհ, աշխատանքի դժվար հմայքով լեցուն եւ յուրաքանչյուր երաժիշտ գիտի, որ իր մասնագիտության իսկական իմաստն ու խորհուրդը հենց այդ դժվարին, բայց այդքան գրավիչ աշխատանքի մեջ է: Դե իսկ համերգը՝ լոկ այդ աշխատանքի արդյունքների բերկրանքը հասարակության հետ կիսելու առիթ եւ հնարավորություն: Ուզում ենք ցանկանալ թե՛ երաժիշտներին, թե՛ նրանց ունկնդրին բազում այդպիսի հնարավորություններ հետագայում:

Ս. ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ,
Արվեստագիտության թեկնածու,
Երեւանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիայի
պրոֆեսոր

ՊՈԼԻՍ

Պատրիարքական օրհնության կոնդակի շնորհում Ռոբերտ Հաստեճյանին՝ 80-ամյակի առիթով

Պոլսահայ գրող, հրապարակագիր, «Մարմարա» թերթի խմբագրապետ Ռոբերտ Հաստեճյանը սփյուռքահայ մեր ամենաբեղուն գրողներից մեկն է, նրա գրչին պատկանող բազմահատորյակները վաղուց արդեն հատել են պատկառելի տասնյակների սահմանը: Նա հետեղեռնյան մտավորական սերնդի այն սակավ նվիրյալներից է, որոնց շնորհիվ վերսին կյանք առավ հայ գիրն ու մշակույթը, երբ թվում էր գոյապահպանման բնազդն է դարձել միակ տեր ու տիրականը աշխարհասփյուռ մազապուրծ հայերի: Սակայն կոչվեցին նրանք՝ ոգու ու մտքի այն պահապանները, որոնք կարողացան վերընձյուղել ֆիզիկական կյանքին զուգահեռ նաեւ մշակութային, հոգեւոր ծառը: Նրանցից մեկը Ռոբերտ Հաստեճյանն է, հայեցի կրթությամբ՝ նախ ընտանեկան մթնոլորտում, ապա՝ Պոլսի Վիեննական Մխիթարյան վարժարանում, որտեղ աշխատակցել սկսեց Մխիթարյան Սանուց միության «Սան» պարբերաթերթին, ապա եւ սանձնեց եւ արդեն 40 տարի վարում է «Մարմարա» թերթի խմբագրապետի պաշտոնը: Բազմաբնույթ եւ ընդգրկուն են Հաստեճյանի հետաքրքրությունները: Նրա գրողական անդրադարձները հայ գրական անդաստանի նշանավորներին, ճամփորդական նոթագրությունները եւ դրանց գրական կերպավորումները, գրականագիտական վերլուծականները, կենսագրական հատորը Շնորհք Պատրիարքի, հիշատագիրը նրան նվիրված, գեղարվեստական արձակը, ծավալուն «Յուշատետրը», որ 1981 թ. սկսած պարբերաբար հրապարակվում էր «Մարմարայի» էջերում, այս ամենը նրան բերեցին հոչակ ու հարգանք: Գրական մշակի խաղցր բեռն ուսած Ռոբերտ Հաստեճյանը թեւակոխում է իր կյանքի 80-ամյակը. եւ ահա հոբելյանի առիթով Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը օրհնության կոնդակ է շնորհել Ռոբերտ Հաստեճյանին, որում ըստ արժանվույն գնահատված է նրա գրական վաստակը եւ ազգաշահ գործունեությունը: «Հասարակաց կարծիք է, որ գրականութեան «հողը չոր ու անբարեբեր է», երբ կ'արժեւորուի նիւթական այլ եկամտաբեր արժէքներու չափանիշներով: Սակայն գրականութեան նուիրեալներ գրիչ ի ձեռին կը ձգտին «պաշտպանել այդ հողը» իբրեւ նուիրականութիւն եւ սրբութիւն ու իրենց երկունքի արդիւնքներով «կը ծաղկեցնեն ու կը հարստացնեն զայն» տեւաբար: Ուրախ ենք, որ դուք եւս այդ նուիրեալներէն էք, եւ գրեթէ ամէն սեռէն Ձեր հեղինակութիւնները եկած են իրենց արժանաւոր տեղը գտնել հայ գրականութեան անդաստանին մէջ», ասված է պատրիարքական կոնդակում:

Ի մասնավորի նշենք, որ Ռ. Հաստեճյանի բեղուն գործունեությունը առաջնորդեն գնահատվել է նախընթաց տարիներին՝ «Անահիտ» գրական, Ալէք Մանուկյան գրական հիմնադրամի մրցանակներ, Թեքեյան մշակութային միության մրցանակ, Շնորհք Պատրիարքի օրհնության կոնդակ, Վազգեն Ա-ի շնորհած Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշան, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ, նախագահական Մ. Խորենացի շքանշանը: Մեր կողմից շնորհավորենք բազմավաստակ գրողին եւ մաղթենք ստեղծագործ կյանքի նույնքան բեղուն շարունակություն եւ եռանդ:

Մ. Բ.

«Նարցիս» գրական հանդեսի անդրանիկ մրցանակակիրները

«Նարցիս» գրական-գեղարվեստական մշակութային հանդեսը անցած տարվանից մտավ մտավորական շրջանակների մեջ՝ երկամյա պարբերականությամբ: Մինչ այսօր թողարկված հանդեսի 6 համարները ներկայացնում են մեր գրական միջավայրին հիմնականում հանրաճանաչ անուններ՝ բանաստեղծության, արձակի, թարգմանության, գրականագիտության-հրապարակախոսության ոլորտներում: Ընդամենը մեկամյա կենսագրությամբ «Նարցիսը» արդեն մրցանակ է սահմանել 4 անվանակարգերում եւ «Նարեկացի մշակութային միությունում» 2 օր առաջ, հիմնադրման 1 տարվա հոբելյանին հանձնեց մրցանակները (500-ական ԱՄՆ դոլար): Լավագույն բանաստեղծական շարքի համար մրցանակային հանձնաժողովը բացառության կարգով ընտրել էր երկուսին՝ Ռազմիկ Դավոյանին եւ Արմեն Մարտիրոսյանին: Լավագույն պատմվածքի համար մրցանակը շնորհվեց Լեւոն Խեչոյանին, թարգմանության անվանակարգում՝ Ռուզաննա Մանուկյանին՝ արաբական պոեզիայի եւ արձակի թարգմանության համար, եւ լավագույն հրապարակախոսության մրցանակը տրվեց Դանիել Երաժշտին՝ «Մշակույթ, թե՝ հակամշակույթ» հոդվածի համար: Մշակութային մերօրյա իրականության համակողմանի այս վերլուծության մեջ հեղինակը դիտարկում է քաղաքականացման եւ առեւտրականացման հետեւանքով ձեւախեղված մշակույթի սպառնացող վտանգը արվեստի իրական արժեքներին եւ նրա կրողներին: Առավել վտանգավորը արվեստի գլուխգործոցները իբրեւ անմշակ հումք օգտագործողների աղաշնորհ գործունեությունն է, եւ միջակության տիրապետությունը մշակութային դաշտում, որոնց նա համեմատում է տոյական ձիու հետ:

Հանդեսի խմբագիրը՝ Վահան Վարդանյանը, իր խոսքը բանաստեղծությամբ սկսեց: Հիմնադիրը՝ բանաստեղծուհի Սոնա Վանը, անդրադարձավ հանդեսի նշանակությանը եւ նրա հիմնական առաքելությանը՝ գրական մաքուր դաշտ ստեղծելու հեռանկարով, չափազանց կարեւորելով ինքնադատական միտքը որպես գրական իրականությունը ճշմարտապես վերհանելու միջոց: Հանդեսը իր էջերը տրամադրում է անկախանորեն բոլորին՝ անկախ գեղագիտական հայացքներից եւ կուսակցականությունից:

Ելույթներ ունեցան Լեւոն Անանյանը, Դավիթ Գասպարյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ռոմիկ Սարդարյանը, Շանթ Մկրտչյանը: Հանդեսը գնահատվեց որպես Հայաստանի եւ սփյուռքի անցած տարվա լավագույն գրական պարբերական եւ առաջարկվեց հրատարակությունը դարձնել ամենամսյա:

Մ. Բ.

Մեկնարկը բավական արդյունավետ էր

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը մեկնարկեցին Հայաստանի տղամարդկանց եւ կանանց շախմատի բարձրագույն խմբի առաջնությունները: Ի տարբերություն նախորդ տարիների, երկու մրցաշարերում էլ բացակայում են մեր փորձառու եւ ուժեղագույն մի քանի շախմատիստներ: Մասնավորապես կանանց մրցաշարում հանդես չեն գալիս մեր առաջատար գրոսմայստերներ Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը:

Մեկնարկային տուրը բավական արդյունավետ էր: Տղամարդկանց առաջնությունում վեց պարտիաներից միայն երկուսը խաղաղ ելք ունեցավ: Հաշտություն կնքեցին Տիգրան Նալբանդյանն ու Ասոն Անաստասյանը: Առաջնությունը հաջող սկսեց մեր շախմատային հույսերից մեկը՝ մինչեւ 20 տարեկանների աշխարհի չեմպիոն Զավեն Անդրեասյանը, որը վերջերս «Ազգին» տված հարցազրույցում հայտարարել էր, թե ձգտելու է նվաճել նաեւ Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Դե ինչ, դժվարին բարձունքի հաղթահարման գործում առաջին քայլն արված է: Զավենը սպիտակներով հաղթեց

ՖՈՏՈԼՈՒՐ

Արսեն Եղիազարյանին:

Հաղթանակով մեկնարկեց նաեւ մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Կարեն Ասրյանը՝ պարտության մատնելով գյումրեցի գրոսմայստեր Արա Մինասյանին: Իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին նաեւ Տիգրան Քոթանջյանը (Արթուր Ջիբուխչյանի նկատմամբ) եւ Արման Փաշիկյանը, որի մրցակիցը Դավիթ Կարաքորոսյանն էր:

Կանանց մրցաշարում միակ գրոսմայստեր Նելլի Աղինյանը սեւերով պարտության մատնեց Լուսինե Ալավերդյանին: Հ�հ ներկայիս չեմպիոն Սիրանուշ Անդրեասյանն էլ մեկնարկեց Անահիտ Խառատյանի նկատմամբ տոնած հաղթանակով: Նունե Դարբինյանը հաղթեց Լիլիթ Գալոյանին, իսկ ահա Նունեի քույրը՝ Անին զիջեց Լիանա Աղաբեկյանին: Միակ ոչ-ոքին գրանցվեց Մարիանա եւ Նարինե Գասպարյանների մրցավեճում:

Ֆուտբոլային բիզնեսը եվրոպական երկրներում

Ֆուտբոլը վաղուց ի վեր զուտ խաղային մարզաձեւից վերածվել է բիզնեսի: Այն քանկ հաճույք է դարձել համաժողովրդական այդ խաղի երկրպագուների համար: Ֆուտբոլային ակումբները զգալի եկամուտներ են ստանում խաղերի հեռարձակման իրավունքի վաճառքից: Հեռուստաընկերություններն էլ ֆուտբոլային հանդիպումների հեռարձակման ժամանակ իրենց ծախսերը փոխհատուցում են հեռուստադիտողների եւ գովազդատուների շնորհիվ: Ստորեւ ներկայացնում ենք, թե այս առումով ինչպիսին է իրավիճակը Գերմանիայում ու Անգլիայում:

Մրցաշրջանի ընթացքում միայն երկու անվճար խաղ

Գերմանացի ֆուտբոլասերների սիրելի զբաղմունքն է մի գավաթ սառը գարեջուր ըմպելով՝ հեռուստատեսությամբ հետեւել ֆուտբոլային մրցախաղերին: Այդ երազանքն իրականանում է յուրաքանչյուր շաբաթ օր: Այդ օրը տեղի են ունենում Բունդեսլիգայի առաջնության վեց հանդիպումներ, որոնք կարելի է դիտել ինչպես ուղիղ եթերում, այնպես էլ խաղերի ավարտից հետո՝ տեսագրությամբ: Շաբաթ օրվա խաղերն ուղիղ եթերով հեռարձակում է վճարովի Arena հեռուստաալիքը: Այն ցուցադրում է նաեւ տուրի մյուս հանդիպումները՝ ուրբաթ օրվա խաղն ու կիրակի օրվա երկու մրցախաղերը: Նման հաճույքի համար ֆուտբոլասերներն ամսական պետք է վճարեն բավական մաքսելի գումար՝ 15-20 եվրո: Սակայն չնայած դրան, ոչ բոլորն են ցանկանում վճարել ֆուտբոլային խաղերն ուղիղ եթերով դիտելու համար: Ուստի ավելի մեծ հեռուստալսարան ունի պետական առաջին հեռուստաալիքով (ARD) շաբաթ օրերին խաղերի ավարտից մեկ ժամ հետո սկսվող ֆուտբոլի տեսությունը: 1,5 ժամ տեւող հաղորդման ընթացքում ֆուտբոլի մեկնաբաններն ու մասնագետները մանրամասն անդրադառնում են կայացած խաղերին՝ ցուցադրելով ամենահետաքրքիր դրվագները, հեռուստադիտողներին ծանոթացնելով վիճակագրական տվյալներին: ARD-ն ուղիղ եթերով հեռարձակում է միայն երկու խաղ՝ մրցաշրջանի բացման հանդիպումը եւ երկրորդ շրջանի անդրանիկ մրցախաղը: Ճիշտ է, կիրակի օրվա երկու խաղերն էլ կարելի է անվճար դիտել Գերմանիայի մարզական հեռուստաալիքով (DSF), սակայն տեսագրությունները, այն էլ զգալիորեն կրճատված տարբերակով: Փաստորեն, Գերմանիայում հեռուստատեսությամբ անվճար հնարավոր է դիտել ընդամենը 2 խաղ:

Գերմանական ակումբները սեփական հեռուստաալիքներ չունեն: Սակայն խաղերի ավարտից մեկ օր անց նրանք իրավունք ունեն իրենց հանդիպումների հեռարձակման հեռուստաիրավունքը վաճառել տարածաշրջանային գերմանական ծրագրերին, խաղերը ցուցադրել ինտերնետային ցանցով: Սակայն դրանցից ստացվող եկամուտն առայժմ չնչին է: Իսկ ահա Arena, ARD եւ DSF հեռուստաալիքներով խաղերի հեռարձակման համար առաջին եւ 2-րդ Բունդեսլիգաների 36 թիմերը մեկ մրցաշրջանում 420 մլն եվրո են ստանում: Բնական է, որ այդ եկամուտը հավասարաչափ չի բաշխվում: Հատուկ կարգ է մշակվել, որը հաշվի է առնում վերջին երեք առաջնություններում թիմերի նվաճումները, ինչպես նաեւ արդյունքները ընթացիկ մրցաշրջանում: Այս ցուցանիշների հիման վրա էլ բաշխվում են խաղերի հեռարձակումներից ստացվող եկամուտները: Հասկանալի է, որ օրինակ «Բավարիան» ավելի շատ է վաստակում, քան ասենք «Էներգին»: Սակայն գործող կարգի համաձայն՝ մեկ մրցաշրջանի ընթացքում թիմի ընդհանուր եկամուտը չպետք է գերազանցի 27 մլն եվրոն:

Զուտ խաղերի հեռարձակումից ստացվող եկամուտի չափով Գերմանիայի առաջնությունը զիջում է Անգլիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի եւ Իտալիայի առաջնություններին: Սակայն եթե հաշվի առնենք նաեւ գովազդից, հովանավորներից, կոմերցիոն գործունեությունից ստացվող լրացուցիչ եկամուտները, ապա Բունդեսլիգան լավագույն եռյակում է՝ զիջելով միայն Անգլիայի եւ Իսպանիայի առաջնություններին:

Չես ուզում վճարել հեռուստատեսությանը, վճարիր գարեջրի համար

Անվճար ֆուտբոլ անգլիական հեռուստատեսությամբ չես դիտի: Պրեմիեր լիգայի առաջնությունը քանկ հաճույք է: Sky TV եւ Setanta Sports հեռուստաալիքներով Պրեմիեր լիգայի 138 խաղերին ուղիղ հեռարձակմամբ հետեւելու համար անգլիացի ֆուտբոլասերները ստիպված են տարեկան 660 ֆունտ ստեռլինգ վճարել: Իսկ եվրագավաթների խաղերով հանդերձ ֆուտբոլային ողջ «փաթեթն» արժե 786,48 ֆունտ ստեռլինգ: Համեմատության համար նշենք, որ «Բոլտոնի» սեփական հարկի տակ կայանալիք հանդիպումների աբոնեմենտն արժե 389 ֆունտ ստեռլինգ, «Չելսիինը»՝ 630-1080 ֆունտ, «Արսենալինը»՝ մոտ 1800 ֆունտ ստեռլինգ:

Այսօրվա դրությամբ Անգլիայի Պրեմիեր լիգայի խաղերի հեռարձակման իրավունքի գինն ավելի ցածր է, քան Ֆրանսիայում: Սակայն հաջորդ մրցաշրջանում այն զգալիորեն կաճի: Երկու հեռուստաընկերությունների հետ 3 տարով պայմանագիր կնքվի 1,7 մլրդ ֆունտ ստեռլինգ ընդհանուր գումարով (տարեկան 569 մլն ֆունտ ստեռլինգ): Այդ գումարը գրեթե կես մլրդ-ով ավելի է, քան երեք տարի առաջ Ֆրանսիայի առաջնության հանդիպումների ցուցադրման համար Canal Plus-ի վճարածը:

Գների նման թռիչքը պայմանավորված է այն բանով, որ հաջորդ տարվանից BSkyB հեռուստաընկերությունը կորցնելու է խաղերի հեռարձակման իր մենաշնորհը: Մեդիամագնատ Ռուպերտ Մերդոկին պատկանող անգլիական լիգայի հետ կնքած նոր պայմանագրով՝ BSkyB հեռուստաընկերությանը բաժին է ընկնելու խաղերի հեռուստահեռարձակման իրավունքի 6 փաթեթներից 4-ը: Մյուս երկուսը գնել է Setanta ընկերությունը, որի նստավայրն Իռլանդիայում է:

BSkyB-ին է պատկանում նաեւ Անգլիայի լիգայի գավաթի խաղերի հեռարձակման իրավունքը (110 մլն ֆունտ ստեռլինգ): Իսկ ահա Անգլիայի գավաթի եւ Եվրագավաթների հանդիպումները հնարավոր է դիտել նաեւ Channel 5 եւ ITV հեռուստաալիքներով: Իսկ Անգլիայի ազգային հավաքականի հանդիպումների հեռարձակման իրավունքը պատկանում է SkyTV եւ BBC-ին:

Նշենք, որ Անգլիայում կա խաղերն անվճար դիտելու տարբերակ: Դրա համար անհրաժեշտ է հաճախել մոտակա բար, որտեղ մեկ գավաթ գարեջրի համար վճարելով 2,5 ֆունտ ստեռլինգ՝ կարելի է հետեւել ֆուտբոլային հանդիպմանը:

ՇԱԽՄԱՏ

Միանձնյա առաջատարը Ռաջաբովն է

Հոլանդիայի Վեյֆ Ան Զեե քաղաքում շարունակվում է շախմատային փառատոնը: Երրորդ տուրում Լեւոն Արոնյանի մրցակիցը ՖԻԴԵ-ի վարկանիշային ցուցակում 2-րդ տեղը զբաղեցնող հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդն էր: Սպիտակներով խաղացող Անանդը դիրքային որոշ առավելություն էր ստացել, սակայն հայ գրոսմայստերը հավերժական շախի շնորհիվ ստիպեց մրցակցին հաշտություն կնքել: Չորրորդ տուրում էլ Արոնյանը ոչ-ոքի խաղաց Մոսիյոնվի հետ՝ հաշտություն կնքելով 22-րդ քայլին:

Ոչ-ոքի ավարտ ունեցան նաեւ Կառլսեն-Անանդ, Սվիդլեր-Պոնոմարյով, վան Վելի-Կարյակին, Կրամնիկ-Նավարա պարտիաները: Բուլղարացի գրոսմայստեր Վեսելին Թոփալովը սպիտակներով հաղթեց Ալեքսեյ Շիրովին եւ վաստակեց 3 միավոր: Երրորդ տուրից հետո աղյուսակը 2,5 միավորով գլխավորող Թեյմուր Ռաջաբովը մրցում էր Սերգեյ Տիվյակովի հետ: Պարտիան ավարտվեց Ռաջաբովի հաղթանակով:

Չորս տուրից հետո միանձնյա առաջատարը Ռաջաբովն է՝ 3,5 միավոր: Արոնյանն Անանդի, Սվիդլերի, Կրամնիկի, Նավարայի հետ 2,5 միավորով առաջատարների խմբում է:

Անհաջող մեկնարկից հետո «Բ» խմբի մրցաշարում անդրանիկ հաղթանակը տոնեց Գաբրիել Սարգսյանը: 3-րդ տուրում նա սպիտակներով հաղթեց Պավել Էլյանովին: Ցավոք, հաջորդ տուրում նա 54-րդ քայլին զիջեց մրցաշարի միակ կին մասնակից Տատյանա Կոսինցեւային: Գաբրիելը 4 հնարավորից ունի 1,5 միավոր: Աղյուսակը 3,5 միավորով գլխավորում է հոլանդացի Յան Սմեքալը, որը հաղթեց Վեոլեին:

Նալբանդյանն սկսեց հաղթանակով

Թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում հաջող է մեկնարկել Դավիթ Նալբանդյանը: Առաջին փուլում նրա մրցակիցը սերբ թենիսիստ Տիպսարեւիչն էր: Մրցախաղը շատ դժվար դասավորվեց Նալբանդյանի համար: Առաջին խաղափուլում Նալբանդյանը մրցակցին զիջեց 6-7 հաշվով: Երկրորդում կրկին առավելությունը սերբ թենիսիստի կողմն էր (6-4): Բարեբախտաբար, արգենտինահայ թենիսիստին հաջողվեց բեկում մտցնել մրցակցությունում: Երրորդ խաղափուլում Դավիթը մեծ դժվարությամբ հաղթեց (7-6), իսկ ահա չորրորդում արդեն հասավ բացահայտ առավելության (6-0): Վճռորոշ 5-րդ խաղափուլը մնաց անավարտ: Նալբանդյանն այն շահում էր 2-1 հաշվով, երբ Տիպսարեւիչը վնասվածքի պատճառով հրաժարվեց շարունակել խաղը: Երկրորդ փուլում Նալբանդյանի մրցակիցը կլինի Նիկոլաս Լարդենին, որը պարտության էր մատնել Ալան Մակինին:

Տղամարդկանց մրցաշարում հաջորդ փուլի ուղեգիր են նվաճել Նադալը, Բլեյքը, Գինեպրին, Բերդիխը, Գրոժանը, Սմիթը, Չելան, Ռոխասը, Դավիդենկոն, Մյուլլերը:

Կանանց մրցաշարում առաջին արգելքը հաջողությամբ հաղթահարեցին Շարապովան, Չակվետաձեն, Ռոդիոնովան, Կլիյստերսը, Հինգիսը, Կուտրյավցեւան:

Մարզական փոփոխություն «Գանձասարում»

Ֆուտբոլային նոր մրցաշրջանին Կապանի «Գանձասարը» նախապատրաստվում է Սուրեն Բարսեղյանի գլխավորությամբ: Վերջինս թիմի գլխավոր մարզչի պաշտոնում փոխարինել է Ալբերտ Սարգսյանին, որը մեկամյա ընդմիջումից հետո կրկին ստանձնել է «Երեւան Յունայթեդի» ղեկը: Ինչպես հայտնի է, Սուրեն Բարսեղյանն անցյալ տարվա առաջնության առաջին շրջանում մարզում էր Երեւանի «Արարատը»: «Գանձասարում» նրան կօգնի Աբրահամ Խաչմանյանը: Թիմի նոր ղեկավարությունն աշխատանքներ է տանում «Գանձասարի» կազմը համալրելու համար: Կապանցիների կազմում են մարզվում թիմ հրավիրված փորձառու ֆուտբոլիստներ, նախկին արարատցիներ Էդգար Սաֆարյանն ու Տիգրան Հովհաննիսյանը, Կարեն Զաքարյանը («Կիլիկիայից»), Վարդան Հովհաննիսյանը («Միկայից»), ինչպես նաեւ ժամանակին Հայաստանում հանդես եկած Քութայիսի «Տորպեդոյի» ֆուտբոլիստ Վախթանգ Հակոբյանը: Հնարավոր է, որ «Գանձասարը» համալրեն նաեւ լեգեոնականները:

Ինչ վերաբերում է «Երեւան Յունայթեդին», ապա թիմը մեկամյա ընդմիջումից հետո կրկին վերսկսում է իր գործունեությունը: Թիմի հովանավոր, լիբանանահայ Տիգրան Հովիվյանը, կարծես թե կրկին լուրջ նպատակներով է Հայաստան ժամանել: Հուսանք, որ գոնե այս անգամ նա մինչեւ վերջ կկատարի թիմի հանդեպ ստանձնած պարտավորությունները:

Հայաստանի ֆուտզալի հավաքականը մեկնել է Ֆինլանդիա

Հունվարի 15-ին Հայաստանի ֆուտզալի հավաքականը մեկնեց Ֆինլանդիա, որտեղ կայանալու է ֆուտզալի Եվրոպայի 6-րդ առաջնության ընտրական մրցաշարի նախնական փուլը: «Ա» խմբում մեր ընտրանու մրցակիցներն են Ֆինլանդիայի, Թուրքիայի եւ Ալբանիայի հավաքականները: Բոլոր հանդիպումները տեղի են ունենալու Հելսինկիի Վանտաա մերձավանում: Հունվարի 18-ին մեր ընտրանին կհանդիպի դատի տերերի հետ, հաջորդ օրը կմրցի Ալբանիայի հավաքականի հետ: Վերջին խաղում՝ հունվարի 21-ին, մեր ընտրանու մրցակիցը կլինի Թուրքիայի հավաքականը:

Հայաստանի ֆուտզալի հավաքականի գլխավոր մարզիչ Ռուբեն Նազարեթյանը հավաքական է հրավիրել հետեւյալ ֆուտբոլիստներին:

Արթուր Կարապետյան (Ադանա)
Ռոման Սիմոնյան (Պոլիտեխնիկ)
Զոհրաբ Նիազյան (Ադանա)
Ռուբեն Երզնկյան (Ադանա)
Տիգրան Պետրոսյանց (Պոլիտեխնիկ)
Սարո Մարդանյան (Ադանա)
Արսակ Հարությունյան (Ադանա)
Արմեն Գյուլամբարյան (Ադանա)
Արմեն Սանամյան (Ադանա)
Արման Սահակյան (Ադանա)
Գրիգոր Կապուկրանյան (Ադանա)
Արսակ Պողոսյան (ԱԳԲՈՒ Արարատ, Կիպրոս)
Էռնեստ Ակոպով (Իբերիա-2003, Վրաստան)
Վլադիմիր Մխիթարյան (Պոլիտեխնիկ)

Նախնական փուլի մյուս երկու խմբերում ընդգրկված են հետեւյալ հավաքականները.

«Բ» խումբ. Բուլղարիա, Անգլիա, Ռումինիա, Լատվիա:

«Գ» խումբ. Կիպրոս, Մալթա, Վրաստան, Ղազախստան:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԴՐԲԵՋԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

Կորչի Ռուսաստանի հեռուստատեսությո՞ւնը

Ժամանակ առ ժամանակ ադրբեջանցիները «վարձակալում են» «Իզվեստիա» թերթի մի քանի էջեր եւ ռուս ընթերցողներին ներկայացնելով տարածաշրջանի «ամենաուժեղ ու դինամիկ զարգացող դեմոկրատական» երկրի կյանքի բազմազան կողմերը, զուգահեռաբար նաեւ հավաստում են Ռուսաստանի նկատմամբ իրենց տածած գրեթե անհուն ու համատարած սերը: Ճիշտ է, նախատոնական հերթական զեղումներում, սակայն, անհանգստություն էր արտահայտված վտարանդի շուկայատեր հասարակայնությանը Ռուսաստանից արտաքսելու հավանականության առնչությամբ:

Եվ այսպես, պարզվում է, որ համաշխարհային քաղաքակրթության մեջ «հսկայական» ավանդ ներդրած այդ «հնամյա» ազգը այսօր աշխարհում ներառում է շուրջ... 50 միլիոն անդամի՝ 8,5 միլիոն բուն «պատմական» օրրանում՝ Ադրբեջանական Հանրապետությունում, 30 միլիոն՝ Իրանում, 3 միլիոն՝ Թուրքիայում, 2 միլիոն՝ Ռուսաստանում, 1,5 միլիոն՝ ԱՄՆ-ում, 500 հազար՝ Ուկրաինայում, 350 հազար՝ Ֆրանսիայում, 400 հազար՝ Գերմանիայում եւ այլն: Ներկայացված է այն իսկապես մեծ կազմակերպչական աշխատանքը, որ կատարվում է «սփյուռքի» ադրբեջանցիներին համախմբելու ասպարեզում: Կարդալով այս թեմայով նյութերը, այն տպավորությունն ես ստանում, որ նրանք առավել արդյունավետությամբ փոխառել են հայերիս փորձը: Ավելին, եթե Հայաստանում այդպես էլ չվերականգնվեց խորհրդային տարիների «սփյուռքահայ» կոմիտեն, ապա Ադրբեջանում վաղուց գործում է արտասահմանում ապրող հայրենակիցների հետ աշխատանքի պետական կոմիտե:

Բուն Ռուսաստանում գործող Համառուսաստանյան ադրբեջանական կոնգրեսը իր շուրջ-փուկները տարածել է երկրի 73 սուբյեկտներում, հրատարակում է 15 թերթ մոտ մեկ միլիոն տպաքանակով: Օրենսդրականորեն իրավունք չունենալով զբաղվելու լոբբիստական գործունեությամբ, համայնքը փորձում է բիզնեսի միջոցով թափանցել Ռուսաստանի իշխանական կառույցները (Բաքվից կառավարվող այս «կոլեկտիվ» գործողությունների ֆոնի վրա առավել ողորմելի են դառնում Հայաստանի որոշ վայ-քաղաքագետների բուռ հարձակումները Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հասցեին, որն իր սեփական միջոցներով ու անձնական ջանքերով հսկայական աշխատանք է կատարում ռուսահայությանը միավորելու գործում):

«Իզվեստիային», անշուշտ, չի կարելի մեղադրել ավելորդ «ադրբեջանասիրության» մեջ. թերթն էլ իր բիզնեսն է անում ադրբեջանցիների հաշվին: Բառացիորեն հաջորդ օրն այդ նույն հրատարակությունը ընդարձակ տեղեկություն հրապարակեց «Ինչո՞վ էր խանգարում ռուսաստանյան հեռուստատեսությունը ադրբեջանցիներին» բնավ էլ ոչ հոեսորական հարց-վերնագրով: Բանն այն է, որ հյուսիսային հարեւանի նկատմամբ դրսեւորած կոնկրետ քննանքն անգամ չխանգարեց, որ տարեմուտին Բաքուն պատշաճորեն արգելի Ռուսաստանի երկու առաջատար հեռուստաալիքների հաղորդումները երկրի տարածքում: Ադրբեջանցիները «անկեղծորեն» խոստովանեցին, որ դա արվում է կոմերցիոն նկատառումներով, իբր նպատակ ունենալով խթանել ազգային հեռուստատեսության զարգացումը: Թե իրոք ինչքանով էր Ռուսաստանի հեռուստատեսությունը խանգարում այդ «ազգանվեր» բիզնեսին, առանձնապես չհստակեցվեց: Դա կարեւոր էլ չէ: Պարզ է, որ նման մասշտաբի գործողությունը չի կարող քաղաքական ասպառ չունենալ, ինչի վրա ուշադրություն դարձրին Ռուսաստանի ԶԼՄ-ները: Մի շարք փորձագետներ դա համարեցին պատասխան քայլ ընդդեմ գազի գինը բարձրացնելու Մոսկվայի պահանջի: Հետաքրքիր չէ ցուցադրաբար վրացիներին տրամադրել հազար խորանարդ մետր գազ 120 դոլարով, երբ «Գազպրոմը» պահանջում է 235: Եվ նույնիսկ Միխայիլ Սաակաշվիլին Ալիեւի այդ քայլը համարեց «հերոսական»:

Սակայն, ըստ երեւույթին, այդ նյութական կորուստն էլ ամենաէականը չէ: Ամեն ինչ նորեն հանգում է քաղաքագաղափարականի: Ադրբեջանցիները խիստ դժգոհ են Ղարաբաղի խնդրի «միակողմանի» (պետք է հասկանալ՝ հայամետ) դիրքորոշումից: Նրանց համբերության բաժակն արդեն լցվել էր տակավին Արցախի անկախության 15-ամյակի տոնակատարության «աղաղակող» ցուցադրումներից: Կարծես դա քիչ էր, Ղարաբաղի հայերը ինքնագլուխ սահմանադրություն են ընդունում: Պատմում են, որ Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովին դժգոհություն է հայտնել, որ ռուսաստանյան հեռուստաալիքները հաճախ անբարյացակամ դիրք են գրավում Ադրբեջանի նկատմամբ:

Ինչպես ասում են, ահա թե որտե՞ղ է թաքնված շան գլուխը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Սուրբ ծնունդը Երուսաղեմում՝ խաղաղության ակնկալիքներով

«Մինչ հունվարի 19-ին Երուսաղեմի հայ համայնքը կնշի Սուրբ ծննդյան տոնը, այդ համայնքի անդամները հավանաբար կակնկալեն, որ նոր տարին լինի որոշիչ այդ տարածաշրջանի համար,- գրում է Արթուր Հակոբյանը **«Ազգին»** ուղարկած իր հաղորդագրության մեջ:

Հայերի ներկայությունը այդ սուրբ քաղաքում, ավելի քան երբեւէ, քաղաքական խուսանավություններին խաչմերուկում է հայտնված հաշվի առնելով, որ մի կողմից արաբները, մյուս կողմից հրեաները փորձում են իրենց վերահսկողության տակ վերցնել այդ քաղաքը: Բայց խաղաղություն հասատելու անհրաժեշտությունն ու կարեւորությունը զգում են բոլորը:

Տարածաշրջանի գլխավոր դերակատար Իսրայելը գիտակցում է վերջապես, որ ռազմական ուժով հնարավոր չէ լուծել խնդիրները կամ վերջ դնել ահաբեկչությանը: Ավելացել են կոչերը վերահմաստավորելու իսլամի իսկական առաքելությունը: Երկու կողմերի առաջնորդներն զգում են, որ ժամանակն է իրենց «նիզակներն» ու «թրերը» փոխարինելու «բահերով» եւ «եղաններով», հասկանալով, որ խաղաղության հասատումով ահաբեկչությունն ինքնաբերաբար դուրս կմղվի իրենց կյանքից: «Գուցե մեզ համար ուշ կլինի վայելելու այդ խաղաղության արդյունքները, բայց վստահ եմ, մեր երեխաների համար դա հիանալի մի նոր աշխարհ կլինի», ասել է մի մեծահասակ հայ: Խաղաղության ակնկալության այս պատգամով է հավանաբար դիմել հայ համայնքի անդամներին Թորգոմ պատրիարք Մանուկյանը Բեթղեհեմում, Սուրբ ծնունդի առթիվ արտասանած իր քարոզում», եզրակացնում է Արթուր Հակոբյանը՝ ավելացնելով, որ հայերի վիճակը Երուսաղեմում եթե իդեալական չէ, համենայն դեպս տանելի է, քանի որ պատրիարքարանը ամեն ինչ անում է աշխատանքով բավարարելու հայերին, իսկ կառավարությունը հոգ է տանում, որ նրանք ստանան համընդհանուր բժշկական մատչելի ծառայություն:

Հ. Օ.

Չինական համակարգչային վիրուս

ՇԱՆՀԱՅ, 16 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՑԺՀ-ում, ԱՄՆ-ում եւ Եվրոպայում հազարավոր համակարգիչներ է ախտահարել Չինաստանում մշակված ամենաավերիչ համակարգչային վիրուսներից մեկը: Այս մասին գրել է «Շանհայ դեյլի» թերթը:

Ծրագրի կոդի վերլուծությունից հետո Շանհայի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մասնագետներն առաջին անգամ դրան վտանգավորության ամենաբարձր աստիճան են շնորհել վարակված համակարգիչներին լուրջ վնաս հասցնելու հնարավորության պատճառով:

Վնասաբեր ծրագրային որդը, որն ստացել է worm.whboy անունը, ըստ փորձագետների տվյալների, ստեղծվել է Չինաստանի Ուհանի նահանգում եւ Ինտերնետ ցանցով արընթաց կերպով տարածվում է վերջին մի քանի օրվա ընթացքում: Դրա առանձնահատկությունը հիմնարկների եւ ձեռնարկությունների տեղային ցանցերն ախտահարելու ունակությունն է՝ խոչընդոտելով ծրագրերի գործարկմանը եւ խախտելով տվյալների պահոցի ամբողջականությունը: Փորձագետները նշում են, որ կոդն ախտահարում է Windows գործառնական համակարգի բացառապես չինական տարբերակը:

ՍԱՆՈՒՑՈՒՄ

VIVAcell
Ձեր ընտրանքը

Ի գիտություն հասարակությանը

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին

Հայաստանի Հանրապետության տարածքում 15 ԳՀց եւ 23 ԳՀց հաճախականության տիրույթներից համապատասխանաբար 14784.5-15330.5 ՄՀց եւ 22330-23530.5 ՄՀց շերտերում ռադիոռելեային կապի 50 կապուղիների օգտագործման թույլտվություն ստանալու համար:

«Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերություն
ՀՀ, ք. Երեւան, Արգիշտիի 4/1,
Հեռ. +37410568777
Ֆաքս. +37410569222
E-mail: info@vivacell.am

Հայաստանի Թեմերեյան մշակութային միության ամենամյա մրցանակների հանձնման արարողություն

Տեղի կունենա հունվարի 23-ին, երեքշաբթի օրը, ժամը 17:00, Թեմերյան կենտրոնում (Խանջյան 50):

Ամենամյա մրցանակների հանձնման արարողությունից մեկ օր առաջ, հունվարի 22-ին, ժամը 15:00, Թեմերյան կենտրոնի ցուցասրահում կցուցադրվեն մրցանակի ներկայացված գեղանկարները, քանդակներն ու լուսանկարները:

ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ

Տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն աշխատանքային եւ սեփականության իրավունքների խախտումների վերաբերյալ:
Ընդունելությունը կատարվում է յուրաքանչյուր
Չորեքշաբթի 14.00-18.00
Շաբաթ 12.00-15.00
Հասցե՝ Արշակունյաց 6,
հեռ.՝ (374 10) 56 82 72, 56 83 72, 58 28 19

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքում հողի սեփականատեր Անահիտ Սարգսյանի** հողօգտագործման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 19,8 լիտր ջրատար ջրագործման թույլտվության նախագիծը:
Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):
Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. հունվարի 23-ին, ժամը 16-00, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:
ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

www.azgdaily.com

ՕՐՎԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԵԼ՝ 56-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 16.01.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 6: